

ՊՐՈԼԻՏԱՐԱԿԱՆԻ Պ ԸՆԴՀԱՆ ՅԵՐԱՔԻՐԱՆԿԵՐԻ, ՄԻԱԳԵՐ

ԿՈՄԻԿՆԻՒԹՅԱԿԱՆ

ԽՆՏԵՐՆԱՅԻՈՆԱԼԻ

**VII** ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ  
ԿՈՆԳՐԵՍ

Դ. Զ. ՄԱՆՈՒԿԻՆՎԻ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԽՍՀՄ-ՈՒՄ



338.98(47)

Մ-27

ՀԿ(Բ)Կ ԿԿ ՀԲԱՑԱՐԱԿԱՌՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1935

2802-1

35-4  
2967

338.92(47) Պրոլետարիներ բոլոր յեթկիւների, միացնը  
Մ-27

ԿՈՄԻՏԵՍԱԿԱՆ  
ԻՆՍԵՐԱՑԻՈՆԱԼԻ  
**VII** ՀԱՍՏԱԿՐՁԱՑԻՆ  
ԿՈՆԳՐԵՍ

Դ. Զ. ՄԱՆՈՒԵԼՈՎԻ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԽԾՀՄ-ՈՒՄ



ՀԱ(Բ) Ա. Ա. ՀՐԱՑԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1935

24 JUN 2013

32230

Թարգմ. Պ. Աբելյան, խմբ. Հ. Գասպարյան  
Մրացրիչ Վ. Զիդեղյան  
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան

Գլավկուտի լիազոր № С—73, հրատ. № 318  
գառափակիր № 332, տիրաժ 3000, ինդեքս Ռ—17

Հայկական սպառակ, Յերևան  
Ալավերդյան № 27



60366-67

Д. З. Мануильский  
Итоги социалистического  
строительства в СССР

Армпартиздат, Эревань, 1935

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

Ընկ. Դ. Զ. Մանուկյան գեկուցումը Կոմունիստական  
Կուսանացիոնալի ՎII Խամափարհային կոնգրեսում  
17 օգոստոսի 1935 թ.

Ամբիոնում ընկ. Մանուկյան յերեվալը ամբողջ կոնգրեսը վոտի կանգնած դիմավորում ե բուռն ծափահարություններով ու վոդզույնի բացականչություններով: Ընկ. Մանուկյանին բացականչում ե՝ «Կեցցե՛ ընկ. Ասալինը»: Բուռն ովացիա: «Ինսերնացիոնալ»: «Ինսերնացիոնալից» հետո ծափահարությունների նոր պայքում:

# I. ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՀՄ-ՌԻՄ

Կոմունիստական ինտերնացիոնալի VI և VII կոնդրեսների միջև ժողովուրդների կյանքում տեղի ունեցավ խոշորագույն մի անցք—սոցիալիզմի վերջնականու անվերադարձ հաղթությունը ԽՍՀՄ-ում։ (Ծափահարություններ)։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո՝ սա միջազգային բանվոր դասակարգի յերկրորդ խոչըր հաղթությունն ենդղեմ համաշխարհային կապիտալիզմի, —մի հաղթություն, վոր նոր դարաշրջան ե բաց անում մարդկության պատմության մեջ։

Տնտեսական ու ֆաղաքական կողմից ուժեղացնելով համաշխարհային պրոլետարական հեղափոխության ամրոցը՝ ԽՍՀՄ մեջ սոցիալիզմի ունեցած հաղթությունը նոր շրջան ե բաց անում մեր յերկրի զարգացման մեջ, նշարկում ե նոր խոշորագույն տեղաշարժ հոգուտ սոցիալիզմի, ի վճաս կապիտալիզմի՝ ուժերի հարաբերակցության մեջ համաշխարհային ասպարեզում, նոր ետապի սկիզբ՝ համաշխարհային պրոլետարական հեղափոխության զարգացման մեջ։ Այդ հաղթությունը, վոր մեր յերկրի բանվորներն ու կուտրնտեսականները տարել են Համեր (բ) կ լենինյան կենտրոնի ու մեր մեծ Ստալինի ղեկավարությամբ և

Համայն աշխարհի պրոլետարիատի ակտիվ համերաշ-  
խությամբ՝ նշարկում և Հոկտեմբերի ծնած կոմունիս-  
տական ինտերնացիոնալի հաղթությունը, նրա ծրագ-  
րի, նրա քաղաքականության, նրա տակահկայի հաղ-  
թությունը:

Կոմունիստական ինտերնացիոնալի այս հաղթու-  
թյան նշանակությունը միջազգային բանվոր դասա-  
կարդի համար ել ավելի հսկայական և ուսանելի յե-  
այն պատճառով, վոր համաշխարհային բանվորական  
շարժումը նույն այդ ժամանակաշրջանում մի շարք  
կապիտալիստական յերկիրներում (Գերմանիա, Ավս-  
տրիա և այլն), վորտեղ դեկալյար դեր նրանում  
խաղացողը սոցիալ-դեմոկրատիան ու ոեֆորմիստա-  
կան արձմիություններն են յեղել՝ կրել և պարտու-  
թյուններ, վորոնք հանդիսանում են սոցիալ-դեմո-  
կրատիայի ոեֆորմիստական քաղաքականության ու  
կապիտուլյանտական տակտիկայի պարտություններ,  
Յերկրորդ ինտերնացիոնալի պարտությունները: Կա-  
պիտալիստական յերկիրների՝ իր սրությամբ ու յեր-  
կարտեսությամբ առաջներում չտեսնված տնտեսա-  
կան ճշնաժամի պայմաններում՝ ԽՍՀՄ մեջ սոցիա-  
լիզմի ձեռք բերած հաղթության համաշխարհային-  
պատմական նշանակությունն այն ե, վոր այդ հաղ-  
թությունը վաս լույսով լուսավորում և միջազդային  
պրոլետարական շարժման զարգացման յերկու ուղին  
—կոմունիստական ինտերնացիոնալի ուղին և Յերկ-  
րորդ ինտերնացիոնալի ուղին: Կոմինտերնի ուղին  
պրոլետարական հեղափոխության միջոցով հանդեց-  
րեց սոցիալիզմի հաղթությանը յերկրազնդի մի վե-  
ցերորդ մասում, հանդեցրեց միջազդային պրոլետա-

րական հեղափոխության դիրքերի հուժկու նոր ամ-  
րացմանը, իսկ Յերկրորդ ինտերնացիոնալի ուղին,  
ոեֆորմիզմի ուղին՝ հանդեցնում և բանվորների պար-  
տությանը, հանդեցնում և Փաշիզմի հաղթությանը:  
Այս յերկու հանրապումարի համեմատությունը հեղա-  
փոխություն և կատարում, չի կարող չկատարել կա-  
պիտալիստական բոլոր յերկիրների պրոլետարիատի  
գիտակցության մեջ, իսրը ըրջադարձ ու վերախըմ-  
բավորում և առաջացնում պրոլետարիատի շարքե-  
րում:

Բայց մեր յերկրում սոցիալիզմի ունեցած հաղ-  
թության նշանակությունը չի սպառվում համաշխար-  
հային բանվորական շարժման մեջ տեղաշարժեր առա-  
ջացնելով: Այդ նշանակությունը շատ ավելի լայն ու  
խորն է: Մեր յերկրը իր սոցիալիստական հաջողու-  
թյուններով սկսում և շարժել ժողովուրդներին: Մեր  
անցյալի համեմատությունը մեր ներկայի հետ սկը-  
սում և մարդկային հսկայական մասսաները համո-  
գել, վոր մեր ուղին ճիշտ ե, վոր երավացի յեն լոլ-  
շեիզմն ու կոմունիստական ինտերնացիոնալի ու-  
ղին:

Ի՞նչ եր մեր յերկիրը մինչև հեղափոխությունը:

Մենք Յեվրոպայում ամենից ավելի շահագործ-  
վող, ամենից ավելի իրավագործկ, ամենից ավելի  
ճնշված բանվոր դաստիարակի, ամենից ավելի աղքատ,  
ընկճված, անբաժին, սովի աղետներին յենթակա դյու-  
ղացիության յերկիրն ենք յեղել: Մենք յեղել ենք ա-  
մենից ավելի հետամնաց, եքստենսիվ հողագործու-  
թյան, իրոնիկական յերաշտների, թերաբերքերի, ա-  
րորի, մարկեղի (մ տ մ բ ա .), վոլոյան բուրլակու-

թյան յերկիրը։ Մենք յեղեւ ենք տիֆալին, խոլերա-  
յին համաճարակների, այլասերման, ալկոհոլիզմի,  
սոսկալի մահացության յերկիր, անկուլտուրական,  
անդրագետ, սնութիապաշտ յերկիր, կրոնական թըմ-  
րության, տերտերական խավարամոլության յերկիր։  
Իրենց ամբողջովին նեխված տիրապետությունը պա-  
հելու համար՝ մեր յերկրի իշխող դասակարգերը  
արհեստականորեն ազգային թշնամանք եյին պատ-  
վաստում, առասպելներ եյին հերյուրում ծիսական  
սպանությունների մասին, կազմակերպում եյին հրե-  
ական ջարդեր, հայ-թուրքական կոսորածներ։ Ինչ-  
պես արյունաթաթախ ծովահրեշ՝ ցարիզմը միսիել եր  
ազգերի մեջ, տանջում եր ամբողջ ժողովուրդներին՝  
անողոք դաժանությամբ ճնշելով ուկրաինացիների,  
բելուսունների, վրացիների, հայերի, թուրքերի, ուղ-  
բեկների, կազակների և այլոց ազգային կյանքի ար-  
տահայտությունները։ Յերկրում յեռում ու հասունա-  
նում եր արտասովոր ույժ ստացած հեղափոխական  
շարժումը, յերբ տանջված ժողովրդի գլուխ կանդ-  
նեց պիուետարկատը՝ բուշիկների կուսակցության  
դեկավարությամբ։ Խոկ բթամիտ, ապիկար իշխողնե-  
րը ջարդ ու բուրդ եյին անում հեղափոխական ժողո-  
վրդին և յերկիրը քօնում եյին դեսի անդունք։ Յերկ-  
րի հետամնացությունն ու անկուլտուրականությունը  
նրանք հայտարարում եյին ոռւսական, «ազգային վո-  
դուռ» առանձնահատկություն և ցարիզմի մզած պա-  
տերազմներում սպանում եյին «սուրբ Սոֆիայի տա-  
ճարի վրա կանդնեցնել խաչը» և «գլխարկակոծ անել»  
հակառակորդին։ Յեկ այս տգիտական պարծենկոտու-  
թյան համար տուժում եյին՝ անցյալում մեր դժբախտ

յերկրի բանվորներն ու գյուղացիները։ Հին Ռուսա-  
տանին խփում եյին, ում ալարը վոր չեր գալիս։

«Խփում եյին մոնղոլական խաները։ Խփում եյին  
թուրքական բեկերը։ Խփում եյին չվեղական ֆեո-  
դալները։ Խփում եյին լեհ-լիտվական պաները։  
Խփում եյին անգլո-ֆրանսական կապիտալիստ-  
ները։ Խփում եյին ճապոնական բարոնները։ Բո-  
լորն եյին խփում—հետամնացության համար։  
Բազմական հետամնացության համար, կուլտու-  
րական հետամնացության համար, պետական հե-  
տամնացության համար, արդյունաբերական հե-  
տամնացության համար, գյուղատնտեսական հե-  
տամնացության համար» (Ստալին)։

Ռուսաստանը ծեծվեց 1914—18 թ. թ. իմպերիա-  
լիստական պատերազմումն ել։ Այս պատերազմից նա  
դուրս յեկավ արյունաքամ վարձած հաշմանդամացած,  
ավերված։ Բայց իմպերիալիստական պետությունները  
նոր պատերազմ փաթաթեցին մի հեղափոխական ժո-  
ղովրդի վզին, վորս տապալեց վոչ միայն ցարիզմը,  
այլև կապիտալիզմը։ Մեր յերկիրը պատառ-պատառ  
եյին անում հեղափոխության կողմից դուրս չըրտված  
կալվածատերերն ու կալիտալիստները, յերկիրը ծա-  
խում եյին մեծաքանակ ու փոքրաքանակ։ Նրան բա-  
ժան-բաժան եյին անում ծայրամասերից—արևմուտ-  
քից, հարավից, հյուսիսից, արևելքից։ Յեկ այս աղե-  
տից, վորին հասցըին մեր յերկիրը կալվածատերերը,  
արդյունաբերողներն ու բանկիրներն՝ նրան վրկողը  
յեղավ պրոլետարական հեղափոխությունը։ (Ծափա-  
հարություններ)։ Պրոլետարական հեղափոխությունն  
է, վոր յերկիրը դուրս բերեց պատերազմից, փրկեց

նրան քաղաքական գրոհումից ու տնտեսական փլու-  
զումից, ցարիզմից ավելի ուժեղ զիշատիչների կող-  
մից թալանվելուց, աղատեց ոտարելրյա կապիտալի  
տնտեսական ստրկացումից, պաշտպանեց ժողովուրդ-  
ներ ու պետություններ անդունիւ դլորած համաշխար-  
հային ճգնաժամից, կապիտալիստական աշխարհում  
մոլեգնող Փաշխստական ռեակցիայից։ Պրոլետարա-  
կան հեղափոխությունն ե, վոր մարդկության պատ-  
մության մեջ չտեսնալած տեմպերով բարձրացնում ե  
արտադրողական ուժերը, փոխարինում ե մարդկով,  
արորն ու գերանդին տրամադրով ու կոմբայնով, «նը-  
զովքով նշավակված աշխարհը քաղցածների ու ըստ-  
րուկների» դարձնում ե յերկրի տերեր ու նոր սքան-  
չելի կյանքի ստեղծողներ, անշեղորեն բարձրացնում  
ե մասսաների նյութական մակարդակը, արմատավո-  
րում ե սոցիալիստական բարձր նոր կուլտուրա, հաս-  
տառում ե ժողովուրդների յեղայրական համակեցու-  
թյուն։ Պրոլետարական հեղափոխությունն ե, վոր  
կառուցեց բանվորական հզոր պետություն, ստեղծեց  
սոցիալ-տնտեսական մի նոր հասարակակարգ, վորի  
մեջ կազմավորվում ե նոր, սոցիալիստական մարդու-  
դեմքը, մարմնալորեց կյանքում այն, ինչի մասին  
յերազել են մարդկության բավարույն մտածողներ,  
—սոցիալիզմը։

Յեվ այսոր, Կոմունիստական Ինտերնացիոնալի  
VII կոնգրեսին, այգափսի նվաճումներով միայն մեր  
կուսակցությունը չե, վոր դալիս ե։ Դա մեր յերիտա-  
սարդ սոցիալիստական յերկիրն ե, վոր, Լենին-  
Ստալինի կուսակցության կամքով դրված ի սպաս  
համաշխարհային պրոլետարական հեղափոխության

չահերին (ապմկալից ծափակարություններ)։ Համայն-  
շխարհի աշխատավորների առջև հաշիվ ե տալիս այն  
մասին, թե նա, ինչպես ե կատարել իր միջազգային  
պարտքը նրանց առջև (ապմկալից ծափակարություն-  
ներ)։ Այսոր նա զեկուցում ե իմալերիալիզմի մնաց-  
ու սորկացրած միլիարդուկես մարդկությանը այն  
մասին, թե ինչպես նա, հասած իմպերիալիզմի կող-  
մից կրօճանման դուռը՝ վերածնվեց սոցիալիզմով։  
Նա իր որինակով ցույց է տալիս փրկության ճանա-  
պարհը՝ շահագործվող զասակարգերին, իմպերիալիզ-  
մի կողմից կեղեցվող դաշտուներին, մնչված ազգե-  
րին, անտեսալիս ու քաղաքականալիս սորկացված  
փոքր պետություններին, իմպերիալիստական պատե-  
րազմներում պարտաված ժողովուրդներին, ճգնաժամի  
ճանկերում քարուքանդ յեղած միլիոնավոր մարդկանց։  
Իր փորձով կոչ ե անում նրանց վերջ տալու այն հա-  
ստարակակարգին, փորը մարդկության համաշխարհա-  
յին գերախոսությունն ու նղովքն ե դարձել։

Իսկ չե՞ վոր մեր յերկրի սոսկալի անցյալից մեղ  
բաժանում ե ընդամենը 18 տարի։ Նրանք ի՞նչ են  
նշանակում այն դարերի համեմատությունը, վոր  
հարկավոր են յեղել անտեսական կացութաձեւերը և  
քաղաքական ձևերը մարդկության դարպացման պատ-  
րաժյան մեջ փոփոխելու համար։ Բայց այս 18 տա-  
րուց ել տասը տարին ընկնում ե արտազրության  
մինչպատերազմյան մակարդակը վերականգնելու  
վրա միայն։

1927—28 թ. թ. մենք միայն նոր ավարտեցինք  
իմպերիալիստական ու քաղաքայիական պատերազմը՝  
քայլայած մեր ժողովրդական տնտեսության վերա-

կանդնումը և անցանք արտադրության մինչպատես-  
րազմյան մակարդակից : Մեր սոցիալիստական ինդուստ-  
րիան այն ժամանակ բաղկացած եր առանձին փոք-  
րաթիվ խոշոր ձեռնարկություններից , իսկ առավելա-  
պես բաղկացած եր հին, մաշված սարքավորում ունե-  
ցող վոչ մեծ Փաբրիկաներից ու գործարաններից՝ ըդ-  
դալով սովորելու մեջնիկայի բնագավառում : Յերկրում  
դեռ շարունակում եյին դոյություն ունենալ սոցիալ-  
տնտեսական հինդ կացութաձևեր՝ սկսած ամենա-  
առաջավորից , սոցիալիստականից և վերջացրած նա-  
հապետականով : Ժողովնականության մեջ սոցիալիստա-  
կան հատվածի տեսակարար կշիռը 1928 թ. 44 տո-  
կու եր կազմում , ու թեև նա անշեղորեն մեծանում  
եր , բայց մեր սոցիալիստական շինարարության հե-  
տագա ամբողջ ընթացքը դեմ եր առնում դյուղատըն-  
տեսության հետամնացությանը : Գյուղում տիրապե-  
տող յերկութը դյուղացիական մանրատված , մանր-  
ապրանքային տնտեսությունն եր , վորը ծնում ու վե-  
րածնում եր կապիտալիստական տարրեր , ձգտում եր  
խարիսկել բանվոր դասակարգի դաշինքը դյուղացիու-  
թյան հետ : Կուլակությունը բարձրացնում եր գլուխը  
և փորձում եր վիճեցնել սոցիալիստական շինարարու-  
թյունը հացամթերումների սարուտաժով : Մենք պետք  
ե լարված պայքար մղելինք հացի համար : Հացի խըն-  
դիրը քաղաքական հրատապ խնդիր եր դառնում : Ար-  
դյունաբերական բանվորների մատակարարումը վը-  
տանդված եր , հետեարար՝ վտանդված եր նաև սո-  
ցիալիստական շինարարությունն ինքը : Յերկրի ներսի  
կապիտալիստական տարրերը իմալերիալիստական թըշ-

նամական շրջապատման հենարանն Եյին հանդիսա-  
նում :

Լենինյան՝ «ո՞վ ում» հարցը իր ամբողջ հասա-  
կով ծառացավ կուսակցության ու ամբողջ յերկրի  
առջեւ :

Պետք եր ընտրություն անել զարգացման յերկու  
ուղիների միջև . կամ նահանջել , վորը դեպի կապի-  
տալիստական վերահաստատում (ուստավրացիա)՝  
եր տանում , կամ հարձակվել , վորը տանում եր և  
պետք ե հասցներ սոցիալիզմի հաղթությանը :

Լենինն ու Ստալինը , վորոնք տանյակ տարինե-  
րի ընթացքում դաստիարակել , սնուցել , ուսուցել են  
մեր կուսակցությանը՝ կուսակցությունը նախապատ-  
րաստել եյին այդ վճռողական ընտրանքի համար :  
Դրանից քիչ առաջ կուսակցությունն ընկ . Ստալինի  
գլխավորությամբ Տրոցկու և զինովյեվյան-տրոցկիս-  
տական բլոկի դեմ մղած անողոք պայքարով պահեց-  
պաշտպանեց մի յերկրում սոցիալիզմի հաղթության  
հնարավորության վերաբերյալ լենինյան-ստալինյան  
դրույթը : (Ծափահարություններ) : Կուսակցությու-  
նը , ըստ եյության , ստիպված յեղավ ճնշելու մանր-  
բուրժուազիայի բռնտը , վոր չեր ցանկանում և վա-  
խենում եր սոցիալիստական հեղափոխության զար-  
դացումից : 1928 թվականին կուսակցության դեմ գրոհ  
սկսեցին աջ ուկլոնիստները , վորոնց բերանով խոսում  
եր կուլակային տարերքը : Նրանք հանդես եյին գալիս  
ինդուստրացման բարձր տեմպերի դեմ՝ պնդելով ,  
վոր արտասահմանից մասսայական սպառման ազ-  
րանքներ ներմուծենք՝ փոխանակ նոր գործարանների  
համար մեքենաներ ու հաստոցներ ներմուծելու , նը-

բանք սույգաբում ելին խորհտնտեսային ու կոլտնտեսային շինարարության ծավալման դեմ՝ առաջարկելով կուսակցության ամբողջվիճ հենվել գյուղացիական անհատական տնտեսության վրա, նրանք դեմ ելին կապիտալիստական տարրերի վրա հարձակում զործելուն՝ հավատացնելով, թե իրը կուլտակը կներածի սոցիալիզմի մեջ, վախեցնում ելին կուսակցության ու բանվոր գասակարգին՝ հայտարարելով, թե կուլտակը վոր չլինի՝ հաց ել չի լինի:

Յերկիրը վարող ստալինյան հանձարը, բանվոր գասակարգի հանձարն եր:

Յեվ կուսակցությունը կատարեց իր ընտրանքը, մի ընտրանք, վորը վորոշեց մեր յերկրի զարգացման բախտը և համաշխարհային սլրուետարական հեղափոխության ապագան:

Կուսակցությունն ընտրեց ամբողջ նակատով կապիտալիստական տարրերի դեմ ծավալուն հարձակում կատարելու ուղին: Դա ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման ուղին եր, յերկրի ինդուստրացման ու գյուղատնտեսության կոլեկտիվացման ուղին, կուլտակության վորպես դասակարգի վերացման ուղին, յերկրում կապիտալիզմը արմատահան անելու ուղին:

Ենդիրը թեթև չեր:

Հարցն այս ժամանակ դրված եր այսպես՝ ասում եր ընկ. Ստալինը, հետ նայելով գնացած անցյալին.

«Կամ մենք այս խնդիրը կլուծենք ամենակարծ ժամանակամիջոցում ու մեր յերկրում կամբառլուկենք սոցիալիզմը, և կամ մենք այս խնդիրը

չենք լուծի ու այն ժամանակ մեր յերկիրը—ունինք նիկապես թույլ և կուլտուրայի կողմեց խավարյացնի իր անկախությունը և կղառնա իմպերիալիստական խաղի առարկա»<sup>1</sup>:

Այս խնդրի լուծումը կապված եր վերակառուցման շրջանի մեծագույն դժվարությունների հետ, մեր տեխնիկա-տնտեսական հետամնացության յերկրի տեխնիկա-տնտեսական հարահաղթարման, գյուղում սոցիալ-տնտեսական հարահաղթարման դժվարությունների բերությունների վերակառուցման դժվարությունների հետ, թշնամական տարրերի սարստաժը և վնասարարությունները ձնչելու դժվարությունների հետ, կապիտալիստական շրջապատռմից բղխող դժվարությունների հետ, այն դժվարությունների հետ, վորոնց հետեւում մշտակես թաղնված եր դասակարգային թշնամին:

Յեվ վորքան հաստատուն եր սոցիալիստական հարձակման ուժը, այնքան կատաղի յեր դառնում կապիտալիստական թշնամու դիմադրությունը: Կապիտալիստական վողջ աշխարհը, չնչաղուսակ հետեւում եր այս պայքարի վախճանին, տեղներից չարժվեցին իմբարական խմբավորմանները, թատերաբետ վորանդիական շտաբները սկսեցին պատրաստվել լնութիւններին շտաբները սկսեցին պատրաստվել լնութիւններին: Բայց վոչ մի բան չեր կարող ընկճել բոլորականին: Այս վոչ մի բան չեր կարող ընկճել բոլորականին: Ենդիրը նրանք հարմարեցնում ելին 1930 տերմինուցիւնիւնի վորը նրանք հարմարեցնում ել ընկերությունը:

1 Ստալին, ճառ Կըմելի պալատում Կարմիր բանակի ակադեմիաների ավարտման առթիվ, 1935 թ. մայիսի 4-ին

տով ծավալում հարձակման անցնելու ուղղությամբ՝ իր կոնկրետ արտահայտությունը գտավ հնամյա պլանում, վորով պլութարական դիկտատուրայի առաջին յերկիրը ստրատեգիական մի խոշորագույն ինքրի, —կապիտալիստական առաջավոր յերկիրներին տեխնիկա-տնտեսական կողմից հասնելու և անցնելու խնդրի, —լուծման հիմունքներն եր դնում: (Ծափահարություններ): Յեվ ահա այստեղ ե, զոր սկզբամ և սոցիալիստական մեծ հառուցման հերսոսական շրջանը, վորը կատաղեցնում ե մեր թշնամիներին, հիացնում և մեր բարեկամներին և զարժմանք առաջացնում ամբողջ աշխարհում:

ԽՍՀՄ ամբողջ աշխարհին ապշեցնում ե իր սոցիալիստական շինարարության տեմպերով: Արդյունաբերական արտադրանքի աճը առաջին հնդամյակում կայմել ե տարեկան միջին թվով 22 տոկոս, 1934 թ.-18,3 տոկոս, 1935 թ. (պլանով)՝ 17 տոկոս: Այսպիսի տեմպեր պատմության մեջ կապիտալիստական վոչ մի յերկիր յերբեք չի ունեցել: Չորս տարվա ընթացքում չուղունի արտադրությունը մենք հինգ միլիոն տոննից հասցնում ենք մինչև տաս միլիոնի, մինչդեռ՝ ԽՄՆ-ին այս ճանապարհն անցնելու համար հարկավոր յեղավ 15 տարի, իսկ Անդիթիսին՝ 36 տարի: Համաշխարհային մեքենաաշխատական արդյունաբերության մեջ 1928 թվականին մեր տեսակարար կշիռ վորոշվում եր ընդամենը 4,2 տոկոսով, 1937 թվականին նա հավասար կլինի 37,5 տոկոսի (Ծափահարություններ): Արդյունաբերության համաշխարհային արտադրանքով 1928 թվականին մենք գրավում ենք աշխարհում հինգերորդ և Յեվրոպայում՝ չորրորդ տեղը,

մենք այժմ զրավում ենք յերկրորդ տեղը ԱՄՆ-ից հետո (ծափահարություններ) և առաջին տեղը՝ Յեվրոպայում: Յեվ դիտեցեք, ընկերներ, զոր խոսքը վոչ թե ներկա Յեվրոպայի ճգնաժամապատ Յեվրոպայի մասին և, այլ 1929 թվականի Յեվրոպայի մասին: (Ծափահարություններ): Նավթի, չուգունի, պողպատի, մեքենաշինության, տրակտորաշինության, բեռնակիր մեքենաների արտադրության կողմից մենք բուրս յեկանք յեվրոպական բոլոր պետությունների պատճենները: (Ծափահարություններ): Մենք մեջ առաջին տեղը: (Ծափահարություններ): Մենք սկսում ենք զարգացնել մեր սեփական հաստոցաշինությունը, բարձրորակ պողպատի, շարժիչների (մոտորների), տուրբինների, գեներատորների արտադրությունը, քիմիական սեփական արդյունաբերությունը, սեփական ավելի շինությունը, տիբանում ենք թյունը, սեփական տիպերի ամենաբարդ մեքենաների արտադրազանազանական տիպերի ամենաբարդ մեքենաների ընթացքում ե կառուցյների ընթացքում, պայմանական ուղիների լիցքեր կացնում տոննելներ, առերժման ուղիների լիցքեր (հասկական պատճեններ), պարագայնում, ջրանցքներ և փորություն, ամբարտակներ և շինում, կառուցում և զործարաններ, զոր նորագույն տեխնիկայի հրաշալիք են, բանական տականում ե արդյունաբերական ընդամենքը, ածխածեալագութեական բազաներ, ինդուստրացնում ե աղպային հանրապետությունները ամենն այն ժամանակ, յերբ կապիտալիտական երկրներում մեռնում ե արդյունաբերական բազաներ, ինդուստրացնում կամաց զարգարում են ծխելուց ուղղություն ունեցող ձեռնարկությունների ծինելուց հետեւ, մեկը մյուսի հինգչում հանդչում են հնագույն անդարտում են նաև հետեւ հինգչում հանդչում են հնագույն անդարտում են նաև

60366-67



վահանդիսաները, բանվորական շատ ավաններում տիրում ե մահաշունչ լուսություն, միլիոնավոր մարդկեկ գտառապարտված են հարկադրական անգործության, իսկ ԽՍՀՄ մեջ ժողովրդական խանդավառության հսկայական ալիքը, որին ձանձապահութիւնը լուր արգելքները՝ կերպարանափոխում ե աշխարհը: (Ծափահարություններ):

Ընկերներ, դուք տեսնում եք այս կերպարանափոխած յերկիրը: Դուք զիտեք, վոր ԽՍՀՄ այս 7 տարում յեռապատկել ե իր արդյունաբերական արտադրագույնքը, վոր սոցիալիստական հատվածն այժմ տիրապետել է մեր յերկրի ամբողջ եկոնոմիկայի 96 տոկոսին: Բայց ի՞նչ ե թագնված յեղել այն տեմպերի հետեւմ, Գննապրոսալոյների, Մագնիսուրսկ-ների, Թուրքսիրների հետեւմ, Սպիտակ ծովածրանցքների հետեւմ, խոշոր արդյունաբերության 40 հազար այն ձեռնարկությունների և մանր արդյունաբերության 300 հազար այն ձեռնարկությունների կառուցման ու աճման հետեւմ, վոր այսոր հաշվում ե մեր սոցիալիստական յերկիրը: Մեր ժողովրդի վիթխարագույն աշխատանքը,— ժողովրդի, վորին այս մեծ շինարարությունը դաստիարակում եր սոցիալիստականորեն, վերակերտում եր դասակարգայնորեն, վերածնում եր նյութագես ու կուլտուրապես, մի աշխատանք, վորի մեջ մեր կուսակցությունը, մեր բանվորական կազմակերպությունները, պրոլետարական հասարակայնությունը հում, դյուզական նյութից կերտում եր հարվածային-ենուուղիստներ, աշխատանքի հերսոններ ու բետոնագործներ, վոր համաշխարհացին սեկորդներ են խիսում, և

Հնոցապաններ, վորոնք անցնում են Հնոցի ողտակարություններն առավելագույն զործակցից:

Մեր շինարարությունը, ինչպես այդ կարող է հեռվից թվալ, հարթ չի ընթացել: Շինարարության համար մեզ պետք եր մետաղ, բայց այդ մետաղը չկար, հարկավոր եյին շինանյութեր, բայց նրանք հաղիվ հաղ եյին բավականանում, այդ շինանյութերը և մարդկային մեծ զանգվածները հարկավոր եր փոխագլուխ նոր վայրեր, բայց արանսպրաը չնչակտուր եր լինում: Գետք եր կառուցողներին ու բանվորներին կերակրել, նրանց ապահովել՝ հագուստով ու վոտնամանով, բնակարանային տարրական պայմաններով, բայց պակասում եյին միջոցներ ու պաշարներ: Վորակյալ բանվորներ եյին պետք, բայց վո՞րեղից նրանց մի անդամից ճարեցինք: Զկային ինժեներներ, տեխնիկներ, չկար ամենատարրական արդյունաբերական կուլտուրա: Մեր վրա ճնշում եյին անում չին ուեժից ժառանդված ուսուսատանյան հին թափթափածությունը, զարավոր անշարժությունը, բյուրոկրատիզմը: Իսկ դասակարգային թշնամին ուղտազործում եր յեր յերկարությունը անվագագույն անվորձ կաղըերի յուրաքանչյուր սխալները, փքուն նախահաշիվներ եր կազմում, խճճում եր պլանները, ներկայացնում եր դիտավորյալ անվետք նախադեր, փչացնում եր մեքենաները, հրկիզումներ, պայմաններ եր սարքում, ինվում եր թանգարժեք սարքավորումը:

Այս տարիների ընթացքում ամբողջ յերկրի մկաններն ու նյարդերը ձիգ թուի նման լարված են յեղել: Մենք միայն մեր կառուցներով եյինք ապրում: Յերբ մենք մտածում եյինք՝ այդ կառուցների թվե-

բով ելինք մտածում, յերբ մենք խոսում ելինք՝ մենք խոսում ելինք միայն նրանց մասին. յերբ մենք նիստերումն ելինք՝ մենք համոզում, վիճում ելինք միայն նրանց առթիվ, յերբ մենք քնում ելինք՝ մեր յերազում միայն նրանք ելին յերկում: Ամեն ինչ յենթարկված եր մի նպատակի— մեծ աշխատանքների պլանի կատարմանը, մի պլան, վոր իրենց առաջ ելին դրել մեր կուսակցությունն ու յերկիրը. այդ նպատակին ելին յենթարկված՝ յերկրի նյութական բոլոր միջների լարումը, մարդկային հավաքարկված (մօ բալ և օ ան հա) կամքը, մարդկային կաղմակերպված եներգիան, բոլշևիկյան կորովն ու նպատակալացությունը, նաև, այդ նպատակը մեր ժողովրդին թելադրել ե կենսական համեստ մակարդակ: Բոլշևիկների մեր միլիոնավոր կուսակցությունն այդ որերին վատ եր ուտում, վատ եր քնում: Մեր լավագույն մարդիկ—Զերժինսկին, Կույցիշևը այրվում ելին՝ անքուն գիշերներ տնտեսական հաշվարարություն անելու աշխատանքի վրա:

Վոչ բոլորն ելին կարողանում դիմանալ սոցիալիստական այս հարձակմանը, վորը նսեմացրեց բոլոր ժամանակների ու բոլոր ժողովուրդների արշավանքները: Ամեն ինչ, վոր յերկչոտ, յեսասեր, ստոր, նեխված եր ճանապարհին վայր եր ընկնում, այս ամենը նվում, լաց եր լինում, անհավատություն եր սերմանում, կործանում եր գուշակում, այս ամենը իր չարանենգ ատելությամբ դեպի սոցիալիզմի հաղթությունը զողվում եր համաշխարհային կապիտալիստ, զինովյելյան-տրոցկիստական բլոկին պատկանող նողկալի, զղվելի, ստոր քաղաքական դեպէնե-

րատները սպանեցին մեր մտերիմին, ամբողջ կուսակցության սիրելին, Բագվի, Լենինգրադի ու Խիբինի հաղթությունների կազմակերպիչ Սերգեյ Միրոնովիչ Կիրովին: (Պատգամավորները վոտքի կանգնելով հարգեցին Ս.Մ. Կիրովի հիշատակը):

Բայց հուժկու այն ալիքը, վորը շարժման մեջ ե դրվում ստալինյան յերկաթյա անդրդիւելի կամքով զեպի առաջ սլացալ: Նա վերցնում եր մեր յերկրի կապիտալիզմի վերջին ամրոցները՝ վերակառուցելով գյուղատնտեսությունը կոլեկտիվացման հիմունքներով: Այնտեղ, վորտեղ 25 միլիոն գյուղացիական անհատական տնտեսություններ կային նաև ստեղծեց 250 հազար կողանտեսություններ, 5 հազար խորհտնտեսություններ, 4 հազարից անց մեջենա-տրակտորային կայաններ, վոր պետությանը նստեցին ինն միլիարդ ռուբլուց ավելի: Այնտեղ, վորտեղ արորն ու ձմեռվա սովոր մազաթափ յեղած գորչախայտ ձին ելին բանում՝ աշխատում են 300 հազար տրակտոր, մոտ 50 հազար կոմբայն, 35 հազար ավտոբոնակիր: Տրակտորավորման կողմից մեր հողագործությունն աշխարհում առաջին տեղն ե գրավում: Այժմ կոլտընտեսային ծխին յերկու անգամ ավելի հող ե ընկնում, քանի չքավոր-միջակ տնտեսությանը, յերբ նում միանձնյա բնույթ եր կրում (ծախահարություններ), այժմ կոլտնտեսականները 1934 թվականին մի միլիարդ փութ ավելի ավրանքային հաց տվին, քանի նույն չքավոր-միջակ տնտեսությունները մինչեւ կոլտիվացումն են տվել: Վերացվում ե մեր գյուղատնտեսության ըստ տեմպերի աճման վաղեմի հետամնացությունը արդյունաբերությունից: 1926—1929

թ.թ. գյուղատնտեսության արտադրանքի տձը տարեկան կազմում եր միջին թվով 2,7 տոկոս, յերկրորդ չնդամյակի առաջին յերկու տարում — 6,5 տոկոս, 1925 թ. նա պետք է կազմի 16 տոկոսից բարձր։ (Ծափահարություններ)։ Այս հաջողությունները միւրնավոր մարդիկ են տեսնում, և դուք, ընկերներ, այս հաջողությունները դդում եք մանավանդ, վորդուք յեկել եք այնպիսի յերկիրներից, վորտեղ հուսահատական և գյուղացիության դրությունը, վորտեղ գերմանական գյուղացիության պարտքերը հասնում են 14 միլիարդ մարկի, վորտեղ ամերիկյան ֆերմերների պարտքերը կազմում են ֆերմաների ամբողջ արժեքի 42 տոկոսը, և մոտ կես միլիոն ամերիկյան ֆերմաներ վերջին տարիներս վաճառված են աճուրդով, վորտեղ ճապոնական գյուղացու պարտքերը հինգ անգամով դերազանցում են գյուղատնտեսության տարեկան ընդհանուր արտադրանքից, այսինքն՝ ճապոնական գյուղացին ու նրա ընտանիքը պետք է դադարեն ուստեղ, խմել, հագնդել հինգ տարի շարունակ, վորպեսդի ազատվեն այս սորկությունից։

Կապիտալիստական տարերի գեմ մեր տարած չաղթությունը հեշտությամբ չե, վոր մեզ հաջողվեց։ Հարկ եր, վոր մենք դյուզում քանուի յինք դարավոր կարգը, հաղթահարելինք նախապաշտմունքները, արմատահան անելինք «միլիոնների սոսկալի սովորությունները»։ Դասակարգային պայքարը գյուղում չտեսնված սրության հասավ։ Գիշերներ ու ցերեկներ եյին անցկենում վիճարանությունների մեջ — լինի, թե չինի կուտնառությունը։ Զքավորը մինչեւ ձայնի կուտքացը կուլակն սովորմ եր ջախջախել սովորությունը, այսոր սոցիալիստիկ հայտնի քարտերը, այսոր հայտնի կապիտալիզմը և ավագանունները կապիտալիզմը։ Իսկ իրականում գյուղացիության կոչուած ձեռքերը բանվոր գասակարդի զեկավարությամբ դյուլում վերացրին կապիտալիզմը և սրանով իսկ ապահովեցին սոցիալիզմի հաղթությունը։ 1928 թ. մենք հարկադրված եյինք հացի քարտեր մացնելու։ Այսոր մենք վերացրել ենք հացի քարտերը, այսոր հացի պրոբելը լուծված և մեր յերկրում։ 1928 թ. հացի պրոբելը լուծված կուլակն սովորմ եր ջախջախել սովորությունը, այսոր սոցիալիզմն և գլխովին ջախջախել

տընտեսության առավելությունների մեջ։ Միջակը տառանկում եր, նա յերեկոյան վճռում եր կոլտնտեսություն մտնել, իսկ առավոտը հետ եր վերցնում ձիերն ու ինվենտարը։ Կուլակը խառնակում եր ժողովրդին, նրան կոչ եր անում սպանելու անսառւններին, վչացնելու ձիերին, հափշտակելու հասարակական սեփականությունը, այրելու հացը։ Նա հանում եր պատերազմի որերից թաղված գամակը։ Այս դժվարությունների միջով և անցել մեր յերկիրը, վորին հաղթությունից հաղթություն և տարել լենինյան կուսակցությունը։ Յեկ կապիտալիստական տարրերի գեմ յեղած այս հարձակման արդյունքները այսոր առկա յեն։ (Ծափահարություններ)։

1928 թվականին մենք նոր եյինք ձեռնամուխ լինում առաջին հնդամյա պլանի կատարմանը։ Մենք այն վոչ միայն ավարտեցինք չորս տարում, այլև արգեն հաջողությամբ կատարում ենք յերկրուդ հնդամյա պլանն ել։ 1928 թ. համաշխարհային բուժուագիտական գործակալությունը այնպես եյին հաշիվ անում, թե գյուղացիների ձեռքերով կիերացնեն սոցիալիզմը և կվերականգնեն կապիտալիզմը։ Իսկ իրականում գյուղացիության կոչուած ձեռքերը բանվոր գասակարդի զեկավարությամբ դյուլում վերացրին կապիտալիզմը և սրանով իսկ ապահովեցին սոցիալիզմի հաղթությունը։ 1928 թ. մենք հարկադրված եյինք հացի քարտեր մացնելու։ Այսոր մենք վերացրել ենք հացի քարտերը, այսոր հացի պրոբելը լուծված և մեր յերկրում։ 1928 թ. հացի պրոբելը լուծված կուլակն սովորմ եր ջախջախել սովորությունը, այսոր սոցիալիզմն և գլխովին ջախջախել

կուլտակին : 1928թ. բուրժուազիան հույսը դրել եր ԽՍՀՄ կապիտալիստական վերասերման վրա, համաշխարհային կապիտալի և մեր յերկրի ներսի կապիտալիստական տարրերի զողման վրա, — այսոր վոչ թէ կապիտալիստական վերասերումն եւ մեր յերկրին սպառնում, այլ կապիտալիստական այլասերումը կը ծում եւ այն աշխարհը, վորտեղ տակավին բուրժուազիան եւ իշխում : Հաղթած սոցիալիզմն այսոր ավելի ու ավելի սերտորեն եւ զողվում համաշխարհային բանվորական շարժման հետ : Այսոր հասել եւ վոչ թէ սոցիալիզմի մայրամուտը և կապիտալիզմի արեածագը ինչպես պնդում եր սպիտակ-գիտարդիական Տրոցիկն, այլ սոցիալիզմի արեածագը և կապիտալիզմի մայրամուտը, ինչուս պնդում եր մեր կուսակցությունը : (Ծափահարություններ) : 1928թ. «ո՞վ ո՞ւմ» լենինյան հարցը տակավին չեր լուծված մեր յերկրի ներսում : Այսոր նա վերջնականապես և անդառնալիորեն լուծված եւ սոցիալիզմի ողտին : 1928թ. մենք ունեյինք վերակառուցման շրջանի դժվարություններ : Այսոր մենք վերջ ենք տվել այդ դժվարություններին, մեզ մնում են այնպիսի դժվարություններ, վորոնք կապված են կապիտալիզմի մնացուկները եկոնոմիկայում ու մարդկանց գիտակցության մեջ հաղթահարելու հետ, «ո՞վ ո՞ւմ» հարցը միջազգային ասովարեզում լուծելու հետ : (Ծափահարություններ) :

Դասակարգային դաժան պայքարում ԽՍՀՄ աշխատավորները լենինյան կուսակցության զեկավարությամբ ընկ . Ստալինի գլխավորությամբ ԽՍՀՄ-ն աղբարային յերկրից, թույլ, հետամնաց, անկուլտուրական սոցիալ - տնտեսական հինգ կացութածեւ ունեցող

յերկրից, տեխնիկա - տնտեսապես կապիտալիստական յերկրներից կախումն ունեցող և ուղմական կողմից խոցելի յերկրից գարձրին բարձր ինդուստրիալ մի յերկր, վորն ընդունակ եւ արտադրելու արտադրական բուրբագիտ մեքենաները, անկախ և ոտարերկրյա կապիտալի քահանաներից, մի յերկր՝ առաջավոր կողեկտիվ գյուղատնտեսությամբ, անբաժանորեն թշխող սոցիալիստական կացութածեւով, մի յերկր, վորն առաջիւղական չափով ապահովված և պաշտպանունակությամբ : (Ծափահարություններ) :

Սրանով իսկ կառուցեցինք սոցիալիզմի անսասան հիմքը : Յել այժմ, մեր ժողովովական տնտեսության հիմքում տեխնիկական նոր բազմ գցելու և նրա հասարակական նոր ձևեր, — արցիալիստական ձևեր, — ստեղծելու հետևանքով մենք մեր յերկրի առջև բաց ենք անում նրա հետագա սոցիալիստական զարգացման համար լայնագույն հեռանկարները : Վոչ արտադրողական ուժերի տեխնիկա - տնտեսական ցածր մրկարդակը, վոչ ել գյուղացիական մանր տնտեսության մասնապատկան կացութածեր այժմ չեն կասեցնի մեր յերկրի առաջիազգացումը սոցիալիստական ուղիներով : Կապիտալիստական եկոնոմիկայի մնացորդների տարերայնության ելեմենտներն առաջվան այլևս չեն արգելակելու յերկրի մեր սոցիալիստական պլանային տնտեսությունը : Այժմ մարդը, նրա աշխատանքը պատրիկացված են այդ պայմաններից, վորոնք անցյալում մեր զարգացման առջև սահմաններ եյին դնում : Այժմ ամեն ինչ վճռողը՝ մարդը, նրա անսահմանձելի կամքը, նրա աշխատանքի կազմակերպումն են : «Մեր ծըրագրի իրական լինելը՝ դա կենդանի մարդիկ են» —

ասել ե ընկ. Ստուլինը: Յեզ այն, ինչ, որինակ, ընկ. Կաղանովիչն արեց յերկաթուղային տրանսպորտում, բոլշևիկյան հաստատակամությամբ շուռ տարով հեն գիտության բոլոր սուսպելագույն նորմաները՝ լավագույն պատկերագրգումն ե այն բանի, թե սոցիալիստական հաստարակակարգն ինչ ույժեր ունի թագցրածիր մեջ, և թէ ինչ բանի կարող են հասնել սոցիալիստական շինարարությունը զեկավարող բոլշևիկները: (Ծափահարություններ):

## II. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՇՐՋԱՆԸ

Սոցիալիսմի հաղթությունը ԽՍՀՄ-ում պայմանական ստեղծեց մասսաների նյութական բարեկեցության նրանց կուլտուրական մակարդակի մի այնպիսի աճման համար, վարն աշխարհում կապիտալիստական վոչ յերկիր յերազում անդամ չե տեսել: Միայն վոր մեր բոլոր խոհերի ու գործերի կենտրոնավայր իր ամբողջ մեծությամբ մենք մեր առջև կարող դնել մարդու մասին հոգալը: Մարդը պատմության աղբ չե, ինչպես հոչակում ե Փաշիզմը, մարդկային գանգվածը Փաշիստական կապրալի մտրակի սուրկա չե, կասպրալի, վորը նիշեական զերմարդ ե յերեակայում իրեն, նա յեզիպտական բուրգեր կառուցող սարուկ չե, նա կապիտալիստական մեքենայի կցորդ չե, վոր մի բուռն տղրուկների (մակաբույժների) համար աղատ ու հանդիսա կյանք ստեղծի, նա սուրկական, ֆեոդալական, կապիտալիստական շահագործման առարկա չե: Մարդը սոցիալիզմի կերպիչը, նոր հաստակակարգի ստեղծիչն ե: Պատմության մեջ առաջին անդամն ե, վոր մարդը իր տեղն ե զրված: (Ծափահարություններ): Նա իր բախտն ու իր պատմությունը դարձնողն ե, նա սոցիալիստական մեքենայի տիրակալն ե: Սոցիալիզմը նրա համար ե, նա ինքն ե սոցիալիզմի մեծ նպատակը:

«Պետք չեր 1917թ. հոկտեմբերին տապալել կապիտալիզմը և մի շարք տարիների ընթացքում սոցիալիզմ կառուցել, —ասում եր ընկ. Ստալինը XVII կուսամագումարում, —յեթե չհասնենք այն բանին, վոր մարդիկ մեղանում լիության մեջ ապրեն: Սոցիալիզմը նշանակում է վոչ թե թըշ-վառություն ու զրկանքներ այլ թշվառության ու զրկանքների վոչնչացում, ունեոր ու կուլտուրական կյանքի կազմակերպում հասարակության բոլոր անդամների համար»<sup>1</sup>:

Խորհուրդների յերկրի մարդկանց համար ստեղծել ունեոր, կուլտուրական, առողջ, ուրախ ու յերշանիկ կյանք—մեր ամբողջ կուսակցությունը, ամբողջ յերկրը այժմ սրա վրա յե համառորեն աշխատում: Ունեոր կուլտուրական ու յերշանիկ կյանք սոցիալիստական յերկրում—սա առանձին մարդու ջանքերի գործ չե: Յերջանկությունը մեղանում պատահմունքի կամ հաջողման խախուս ավագի վրա չի կառուցված, նա վիճակված չե ամենից ավելի նենդավոր, լիտի և ուրիշներին արմունկով բոթելով ճանապարհ բաց անող, անպատկառ մարդկանց: Մենք, համորեն ույժ տալով գործին՝ լուծում ենք սոցիալիստական մարդկության յերջանկության խնդիրը: Տասնյակ միլիոնավոր մարդիկ մեղանում իրենց բախտը կապել են սոցիալիզմի հաջողությունների հետ: Յեվ միայն այս հոկայական կունկուիլն ե, վոր ի վիճակի յե լուծելու մի այսպիսի խնդիր:

Մենք արդեն այսորինակ մեծ նվաճումներ ունենք աշխատավոր մասսաների նյութական ու կուլտուրա-կան մակարդակի արմատական բարեկավման գործում: Յեվ խոսքը ռեֆորմների մասին չե, վոր պրոլետարի-ատը կատաղի մարտերով պոկում ե կապիտալիստներից, վորպեսզի կոնյունկտուրայի առաջին իսկ վատ-թարացման պարագայում, ինչպես այս բանը ցույց տվեց համաշխարհային տնտեսական ճգնաժամը՝ նո-րից կորցնի նրանց: Խոսքն այնպիսի փոփոխությունների մասին ե, վորոնք մեկնակետ են ծառայում մաս-սաների դրության հետագա բարելավման համար, վո-րոնք հնարավոր են միայն սոցիալիզմի հաղթությամբ:

Մեր յերկիրը չգիտի և չի ել գիտենալու գործա-գրքություն ասած բանը: (Ծափահարություններ): Մկուծ 1928թվականից՝ մեղանում բանվորների ու ծառայողների թիվն աճել ե յերկու անգամից ավելի, աշխատավարձի ֆոնդն ավելացել ե հինգ անգամից ավելի, մինչդեռ՝ կապիտալիստական յերկիրներում աշխատավարձն իջել ե 40—50 տոկոսով: Սոցիալական ապահովագրության ծախսերը մեղանում 1928թվա-կանի 1050 միլիոնից 1935թվականին հասել են ավելի քան 6 միլիարդի: (Ծափահարություններ), իսկ կա-պիտալիստական յերկիրներում սոցիալական ապահո-վագրությունը վերացվում ե, բուրժուազիան ել ավե-լավագում բանվորներին՝ աշխատավարձից հա-մեր յե թալանում բանվորներին՝ աշխատավարձից հա-նումներ կատարելով: Աշխատորը մեղանում կրծա-ված ե մինչև 7 ժամ վերերկրային արդյունաբերու-թյան մեջ և մինչև 6 ժամ հանքահարերում, իսկ կա-պիտալիստական յերկիրներում տեղի յե ունենում աշ-

1 Ասալին, «Լենինիզմի հարցեր», 10-րդ հրատ. հջ 585:

իստորիա ավելացում՝ աշխատանքի ինտենսիվացման  
հետ միասին։

Մեղանում չկա գյուղի աղքատացում։ Մեր գյու-  
ղացին չդիտե, թե ի՞նչ բան է ագրարային ճգնաժա-  
մը։ Նա թախծանքով չի նայում զաշտային թմբին,  
վորը սահման է դուռմ մարդկային բարեկեցիկ կյան-  
քի նրա ձգումներին։ Նա չի տանջվում վոչ հողա-  
քի պրկությունից, վոչ քաշող ուժ մինելուց, վոչ ել  
զբակությունից։ Մեղանում պակասությունից։ Միայն  
ինվենտարի ու սերմացուի պակասություններին այս  
տարվա աշնան ու ամառը խորհրդականություն-  
ներն ու կոլտնտեսությունները ստացան 21 հազար  
կորսայն, գրեթե հարյուր հազար ել տրակտորներ։  
Մեր գյուղացուն վաշխառուներն ու բանկերը չեն խեղ-  
դում, մեղանում պետությունը միլիարդավոր ոռու-  
թիներ են երգել գյուղատնտեսությունը բարձրացնե-  
լու գործի մեջ։ Մեր գյուղացին արագ քայլերով դե-  
պի ունեոր կյանք է գնում։ Արդեն 1933 թվականին  
այլ ունեոր կյանք է գնում։ Արդեն 1933 թվականին  
հատիկային մշակութների ընդհանուր բերքը կոլտըն-  
տեսություններում բնակչության մի շնչին 10 տոկո-  
սով ավելի յեր, քան 1929 թվականին կուլտակային  
տնտեսություններում։ (Ծափահարություններ)։ Յու-  
րաքանչյուր կոլտնտեսականի և նրա ընտանիքի անդա-  
մի 1933 թվականին ընկնում եր միջին թվով 10,2  
ցենտներ հանդեպ 1929 թվականին չքավոր-միջակային  
տնտեսություններում ստացված 6,2 ցենտների և կու-  
լակային տնտեսություններում ստացված 9,2 ցենտնե-  
րի։ Մեր գյուղացիության բախտը նրա սեփական ձեռ-  
քումն է, կոլտնտեսության հետ ունեցած նրա տն-  
իսխամ կապի մեջ է, կոլտնտեսության, վորը մեխա-  
նիկական ամրապինդ բազայի վրա յե հենված։

Արագատեմով առաջ և ընթանում մեր կոմունալ-  
շինարարությունը, աճում և քաղաքների բարեկեցու-  
թյունը, չքանում են բանվորական թաղերի հետըն-  
թյամբ անկյունները, վորոնք բնորոշ են կապիտալիզմի  
կամ անկյունները, վորոնք բնորոշ են կապիտալիզմի  
համար, կառուցվում են ընդարձակ, լուսավոր տներ,  
համար, կառուցվում են հին քաղաքները, գետնի տա-  
վերակառուցվում են հին քաղաքները։ Մուկվայի վե-  
կից բարձրանում են նոր քաղաքներ։ Մուկվայի վե-  
րակառուցման տասնամյա պլանը, վոր վերջերս ըն-  
դունեցին մեր կուսակցությունն ու կառավարությու-  
նը՝ տալիս ե իր գեղեցկությամբ ու բարեկարգու-  
թյամբ հեքիաթային մի արևական քաղաքի գիմադե-  
թյամբ, վորը լիովին արդարացնելու յե աշխարհի մայրա-  
քաղաքի կոչումը։

Նկատելիորեն բարձրանում ե աշխատավորության  
կուլտուրական մակարդակը։

ԿՍՀՄ մեջ տարբական և միջնակարգ դպրոցնե-  
րում սովորում են 25 միլիոնից ավելի մարդ և զբաղ-  
ված են 600 հազար ուսուցչներ։ Միջնակարու դպրո-  
ցում սովորողների թիվը վեց տարում ավելացել է 10  
տասնկամբ։ Այժմ մեր բարձրագույն ուսումնական հաս-  
տատություններում ու տեխնիկումներում հաշվում  
տատառություններում ու տեխնիկումներում հաշվում  
են մեկ միլիոն 300 հազար սովորողներ։ Յերկրորդ  
հանդիպությանը մասնակեաների թիվը աճում է նախատե-  
հնակամ յակը մասնագեաների թիվի աճում և նախատե-  
հնակամ յակը միլիոնից մինչև 4 միլիոն, ըստ վարում գյու-  
ղում 2,7 միլիոնից մինչև 4 միլիոն, թիվը կրկնակի յե  
դպրության մասնագեաների թիվը կրկնակի յե  
աճում։ Մասնայական վորակավորում ունեցող շրմ-  
անալարաների թիվը յերկրորդ հնակամ յակում հաս-  
տատության համար համար չափում է Միայն 1934 թվականին  
ու հինգ միլիոն հոգու։ Միայն 1934 թվականին  
270 հազար շաբաթային գյուղացի պատանիներ ու աղ-  
ջիկներ տիրացան արակտորին, իսկ 19 հազարը դար-



կոմբինատը և այլն։ Ուկրաիներեն լեզվով թերթերի  
տիրաժը անցնում է վեց միլիոնից։

Միջին ասիական հանրապետություններում աճել  
է իրենց արդյունաբերությունը՝ սլրուետարների յե-  
րեք հարյուր-հազարանոց չոկատով։ Թուրքեստանի  
գյուղատնտեսության մեջ մինչև հեղափոխությունը  
800 կութան եր բանում, այժմ միջին-ասիական դաշ-  
տերը վարում են կես միլիոն գութան և 15 հազար  
տրակտոր (ծափահարություններ), Միջին Ասիայի  
տեխնական տնտեսությունների 70 տոկոսն ընդգրկ-  
ված է կուեկտիվացմանը։ Թուրքեստանի տարրական  
դպրոցներում մինչև հեղափոխությունը չնչին քանա-  
կությամբ յերեխաներ ենին սովորում և այն ել՝ ա-  
ռավելագես ռուս յերեխաներ։ 1934 թվականին Միջին  
Ասիայի 11 հազար տարրական դպրոցներում մայրենի  
լեզվով ուսում եր ստանում մեկ միլիոն յերեխա։  
(Յերկարան, բուռն ծափահարություններ)։ Այնտեղ  
35 բարձրագույն ուսումնական հաստատություններ  
կան։ Թուրքեստանում մինչև հեղափոխությունը 0,7  
տոկոս դրագետ բնակչություն կար, այժմ այնտեղ  
բնակչության 70 տոկոսը դրագիտության և տիրա-  
ցել։ (Ծափահարություններ)։

Միջին Ասիայի հեռավոր կեղիչ տափաստաններում  
կատարվել ե պատմական մի մեծագույն անցք, վորը  
ամենախորը ալեկոծում է առաջ բերում ամբաղջ Ա-  
րևելքում, վորտեղ ապրում է մարդկության կեսից  
ավելին։ Խորհրդային Միության միջին - ասիական  
հանրապետություններում, վորտեղ վաղուց չե վոր  
ֆեոդալական-կալվածատիրական, ստրկական կացու-  
թաձեն եր թագավորում՝ այսոր սոցիալիստական հա-

սարակակարդ և կերտվում։ Մենք քաղաքական ակտիվ  
ու արտադրական կյանքի բարձրացրինք բնակչության  
մի այնպիսի հսկայական շերտը, ինչպիսին կանայք են։  
Դեղձկուհին, վորն անելանելի կարիքից արցունք եր  
թափում, վորն իր զառը վիճակը, կնոջ բախտն եր  
հառաջանքով յերգում, վորը կեղիչ, աշխատանքի յե-  
ռուն ժամանակ դաշտաշերտիկում եր ծնում՝ կոլտըն-  
տեսության մեջ զառնում և սոցիալիստական շինարա-  
րության ակտիվ, խիզախ մասնակից։

Կոլտնտեսային նոր կանոնադրությունը նրան  
ծննդաբերության ժամանակ ապահովում է արձա-  
կուրդի իրավունքով՝ պահպանելով կոլտնտեսության  
մեջ նրա ունեցած միջին վաստակը։ Նա ընտրվում է  
կոլտնտեսությունների վարչությունների, գյուղիոր-  
հուրդների, շրջգործկոմների, մարզային ու հա-  
մամիութենական ղեկավար մարմինների անդամ։  
Վերջին ընտրությունների ժամանակ վորպես գյուղ-  
խորհուրդների անդամները ընտրվել են 330 հա-  
զար կանայք, վորպես գյուղխորհուրդների նա-  
խագահներ աշխատում են 2500 կանայք, քաղ-  
խորհուրդների մեջ ընտրվել են 50 հազար պատ-  
գամավոր-կանայք։ Իսկ վո՞րքան կանայք են պարզե-  
վատրվել լենինի և Սչինտանքային կարմիր դրոշի  
շքանշանով։ Պետությունն անում է ամեն ինչ, վոր  
աշխատավոր կնոջ առջեւ ավելի լայն բաց անի հաստ-  
ակական ու արտադրական կյանքի ասպարեզ դուրս  
դարձ ճանապարհը։ Այս նպատակով հեցտացն ում են  
կնոջ համար յերեխաների մասին հոգ տանելու դոր-  
ծը՝ մեզանում նախադպրոցական հիմնարկները մոտ  
8 միլիոն յերեխաներ են ընդգրկել։

Ընդհանրապես մեր յերեխաները շրջապատված են չերմ սիրով, ուշադրությամբ ու հոգածարռությամբ այնպես, ինչպես կապիտալիստական վոչ չէ յերկրում: Մենք վերջ գրինք մանուկների անապատանությանը, վորը մենք մեր ծանր անցյալից եյինք ժառանգել: Մենք չունենք բախտի քմահաճույքին թողնված յերեխաներ, վորովհետեւ վորբացած յերեխաների խնամքն իրենց վրա յեն վերցնում պետությունն ու հասարակությունը:

Արդյոք կարելի՞ յէ մի առ մի թվել մեր ըսլոր նվաճումները: Ինչ հսկա հատորներ ել լինեն՝ նրանք չեն կարող նկարագրել այն ամենը, ինչ արվում ե հաղթած սոցիալիզմի մեր յերկրում: Բայց այս ըսլոր նվաճումները, վորքան ել նրանք մեծ լինեն՝ մեզ չեն բավարարում: Մեր ձգտումների մեջ մենք չենք յերում ոռուսաստանյան մինչհեղափոխական բանկորի մակարդակից, կապիտալիստական յերկինների բանվորի մակարդակից: Թե՛ մեկը և թե՛ մյուսը որինակ չե մեզ համար, նա չի կարող մեզ համար զւրողես չափանիշ ծառայել այնպես, ինչպես կալանավորի ուժիմը չի կարող որինակ ծառայել մի մարդու համար, վորը դուրս ե պրծել և մտել ազատ կրանք: Մենք ուզում ենք, վոր մեր բանկորն ու կոլտնտեսականն ել ավելի լավ ապրեն, վոր առանց բացառության բոլորը ունեօր լինեն, վոր մենք ավելի շատ միս, ճարպեղեն ունենանք, վոր մեր զյուղը վատից զյուղի լավ հաղնված լինի, վոր ծգոտե խթէիթները մեզ չչի չեցնեն ոռուսական չին իրականության մասին, վոր ընդհանուր հիդրենան, կոնֆորտն ու հարմարությունները մենք նվաճենք բոլորի համար, վոր

մարդը յերբեք չհոգնի ապրելուց և ուրախանալուց: (Ծափահարություններ): Այս ճանապարհով ե վոր մենք անդադրում, հաղթահարելով բոլոր խոչնուաներն ու դժվարությունները՝ առաջ ենք շարժվում: Զի անցնի միքանի տարի ել և գուք չեք ճանաչի այսորվա յերկիրը՝ այնպես, ինչպես այսոր սոցիալիստական Ռուսաստանում դուք չեք ճանաչում նեպական Ռուսաստանը:

Մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու հետեանքով ձեռք ենք բերել պրոլետարական դիկտատուրայի պետության հսկայական ամրացում: Մենք այսոր ել, ինչպես և հոկտեմբերի հետեւյալ որը՝ մնում ենք պրոլետարական դիկտատուրայի պետություն, բայց ԿՍՀՄ-ում սոցիալիզմի ունեցած անվերադարձ հաղթությամբ մենք մեր խորհրդացյին պետության հըզգորությունը չտեսնված բարձրության ենք հասցնում: Մեր պետությունն այլևս այն չե, ինչ նա յեղել ե քաղաքացիական պատերազմի շրջանում, յերբ մենք հարկադրված եյինք արյունալի մարտերում կոյելու խորհրդացյին իշխանության ստեղծման ու ամրապնդման համար: Այսորվա ժամանակի մեր պետությունը՝ դա մենակայուն, ամենահստատուն կարդ ու կանոնի, սոցիալիստական այնպիսի կարգ ու կանոնի պետություն ե, վօրը. հենված ե վոչ թե ուզմական կոմունիզմի եկոնոմիկայի վրա, այլ հաղթած սոցիալիզմի առաջադիմուն եկոնոմիկայի վրա: (Ծափահարություններ): Սա վոչ թե այն ժամանակվա պետությունն ե, յերբ կաղիտալիստական տարրերի զեմ սոցիալիզմի մզած գտասակարգային պայցարում գեռ միայն լուծվում եր «ո՞վ ում»-ի պատմական հարցը,

այլ մի պետություն ե, վորտեղ սոցիալիզմն արդեն հաղթություն ե տարել կապիտալիստական տարրերի դեմ: Սա վոչ թե զանազան սոցիալ-տնտեսական կացութաձերով պետություն ե, այլ մի պետություն ե՝ անբաժանորեն տիրապետող սոցիալիստական կացութաձեռվ և բանվորների ու կոլտնտեսականների շահերի շարունակ աճող միասնությամբ:

Լենինը տակավին 1918 թվականին ե ասել, վոր «Խորհուրդները դեմոկրատիզմի բարձրագույն ձևն են, դեռ ավելին՝ դեմոկրատիզմի սոցիալիստական ձևի սկիզբն են»: Ընկեր Ստալինի ձեւներեցությամբ՝ Խորհուրդների VII համադումարի պատմական վճիռը՝ մեր յերկում հավասար, ուղղակի ու դաշտոնի քվեար կություն մացնելու մասին խոշորագույն մի քայլ և սոցիալիստական այն դեմոկրատիան իրադութելու ձանապարհին, վորի մասին խոսել ե Լենինը:

Մենք ինչո՞ւ այդ քայլն արինք:

Առաջին, այն պատճառով, վոր պլոտետարական շիկտառութան ամրապնդվել ե,—միենույն ժամանակ պլոտետարական դեմոկրատիայի հետագա ծավալումն իր հերթին ե'լ ավելի յէ ամրապնդում պլոտետարական շիկտառութան:

Յերկրորդ, այն պատճառով, վոր մեր յերկրում արտադրության միջոցների մասնավոր սեփականության փոխարեն հաստատվել ե սոցիալիստական սեփականությունը, բայց պլոտետարական դեմոկրատիայի հետագա զարգացումը մասսաների գիտակցության մեջ իր հերթին ամրապնդում ե հանրային սեփականության անձեռնմխելիությունն ու անխափունելիությունը, նաևստում ե կապիտալիզմի մնացուկները

Հկոնոմիկայում և մարդկանց դիտակցության մեջ հաղթահարելուն:

Յերրորդ, այն պատճառով, վոր ԽՍՀՄ-ում տեղի յեն ունեցել սոցիալական այնպիսի տեղաշարժեր, վորոնք հեշտացնում են խորհրդային յերկրի համար սոցիալիստական անդասակարգ հասարակության անցնելը: Իսկ պրոլետարական դեմոկրատիայի ընդլայնումն իր հերթին արագացնում ե սոցիալիստական անդասակարգ հասարակության կառուցումը:

Մարդկային հոկայական զանգվածները մեր յերկրում այժմ վերջնականապես ու անվերադարձ կերպով չըջադարձ են կատարել դեպի սոցիալիզմի կողմը:

Նոր կյանք կերտելու ստեղծագործ մեծ տյառապելի մեջ ներդրավված են վոչ թե՝ հարյուր հազարավոր առաջավոր պրոլետարեներ, այլ 100 միլիոնից ավելի սոցիալիստական աշխատավորներ:

Կոլտնտեսական դարձած գյուղացու հետեւից՝ դեպի սոցիալիզմ յեկան ակադեմիկոսների, գիտնականների, մասնագետների, գերասանների, նկարիչների դեռևս յերեկ պահպանողականորեն մտածող տարրերը: Ժողովրդական զանգվածների խորքերից բարձրանում են դեկավարներ, կազմակերպիչներ, հնէեներներ, տեխնիկներ, գյուտարարներ, աշխատանքի ու գիտության անթիվ անհամար անվեհեր հերոսներ, Արկտիկային տիրապետող հազարավոր ջերմ ենտուզիաստներ, տիեզերական բարձունքին մարտականչ անող խիզախ ստրատանավորդներ, ողաչու—հերոսներ, ծովախորքերի, յերկրի ընդերքի և լեռների կատարների հետագոտիչներ:

Սոցիալիստական կյանքի կառուցման մեջ և մըս-

նում խորհրդային հողի վրա ծնված ու խորհրդային պայմաններում կազմավորված յերիտասարդ, նոր սերունդը: Այս սերունդը չի գիտեցէլ, թե ի՞նչ բան են կապիտալիստները, գործակատարները, ժանդարմները, չի գիտեցէլ սորկություն, շահագործում ու ձնչում ասած բանը, նա գիտե և ընդունում է միայն սոցիալիզմի շահերը, ինքիներն ու նպատակները:

Նա, այդ սերունդը, ինչպես և Հեղափոխության դարրոցն անցած ավագ սերունդները, սիրում ե իր յերկիրը ջերմ, վարդիսկան սիրով, սիրում ե նրան վոչ թե այն պատճառով, վոր նա վիթխարէ յէ, վոր նրան վողողում են 5 ծով ու 2 ովկիանոս, վոչ թե այն պատճառով, վոր նա ունի անմերձենալի լեռնաշրջաններ, լայնարձակ գաշտեր, թավուտ անտառներ, ջրաշատ գետեր, վոչ թե այն պատճառով, վոր այս յերկիր և նրանում ապրող ժողովուրդների պատճության մեջ ճակատամարտ ե յեղել կալկա գետի մոտ, Դիմիտրիյ Դոնսկոյ ե յեղել, յեղել ե Իվան Կալվատ, Ռուսիայի հայտքիչը, այլ այն պատճառով, վոր հակայական են այս յերկիր համամարդկային նպատակները, վոր մեր զետերը, ծովերը, ովկիանուները խորհրդային են, այն պատճառով, վոր մեր յերկիր անցյալում յեղել են վոչ միայն իվան Կալվատ, այլև Ստեփան, Ժողովրդական բունտեր են յեղել, Մորոզովյան գործադուլը, Պրեմյայի բարիկադներ են յեղել, դարձող պայքար ե յեղել ցարիզմի դեմ, այն պատճառով, վոր Լենինն ու Ստալինն այս յերկիրը Յելլոպայի համար ժանդարմ լինելուց դարձել են ժողովուրդների ազատության մեծ ճանապարհը, գարձրել են մի յերկիր, վորը համաշխարհային պրոետ-

րական հեղափոխության սկիզբն ե բացել (քուն ծափակարություն պատճառով), այն պատճառով, վոր ինտերվենտների դեմ մզած հեղափոխական պատերազմում այս յերկիրն աշխարհին հերոսության հրաշքներ ցույց տվեց:

Նրանք իրենց յերկիրն այն պատճառով են սիրում, վոր կապիտալիստական բարբարոսության մեջ այս յերկիրը խորհրդային հումանիզմի կրողն ե հանդիսանում, վոր խորհրդային այս հումանիզմը գերածածկում է այն ամենը, ինչ բուրժուազիան կարողացել և կատարել իր ծաղկման լավագույն ժամանակը: Նրանք իրենց յերկիրն այն պատճառով են սիրում, վոր այս յերկիրը սոցիալիստական է, նրանք իրենց բազմազդի ժողովրդին այն պատճառով են սիրում, վոր սա աշխարհիս ամենահեղափոխական ժողովուրդն է, այն պատճառով են սիրում, վոր այս յերկիրն ու այս ժողովուրդն ամբողջ աշխատավոր մարդկության աղատազրման պատվարն են: (Ծափահարություններ)

Վորքան արագ են կատարվում սոցիալիստական շինարարության վերելքն ու զարգացումը, վորքան լայն զանգվածներն ավելի ու ավելի յեն ներզրավում այս շինարարության մեջ, այնքան ավելի սուր կերպով ե հանդես գալիս նոր, ավելի ճկուն ու բազմազան ձեերի կիրառման անհրաժեշտությունը՝ մասսաների փաստական մասնակցությունը պիտության կառավարման գործում ազատովելու համար, պետական մարմինների աշխատանքը բարելավելու, անցյալի բյուրուկատական ժառանգությունը նրանցում արմադակութիւնը, ընդհանուր վերահսկումն ու հաշվա-

ոռումը կենսագործելու համար, հետևաբար և աճում ենորհքային պրոլետարական դեմոկրատիայի հետաղա ծավալման պահանջմունքը:

Բայց պրոլետարական դեմոկրատիայի հետագա ծավալումն ել իր հերթին դառնում է սոցիալիստական շինարարության գործի մեջ նոր խավեր ներդրավելու գործիք, մարդկանց սոցիալիստական վերադաս տիարակման գործիք, մարդկային դիտակցությունը վերակերտելու և կապիտալիզմի մնացուկները նրանում հաղթահարելու գործիք: Պրոլետարական դեմոկրատիան զարգացնում է մասսաների ձեռներեցությունն ու ինքնադրություններությունը, նրանց մեջ պահնջմունք և առաջացնում ընտրված մարմիններին հետեւելու, հսկելու, բարձրացնում և սոցիալիստական շինարարության համար պատասխանատու լինելու նրանց զգացմունքը, նրանց ընտելացնում և սոցիալիստական մեծ տնտեսությունն ու մեծ պետություն կառավարելու, նրանց մեջ սոցիալիստական վերաբերմունք և դաստիարակում դեպի աշխատանքը:

Պրոլետարական զարգացող դեմոկրատիայի պայմաններում մեծանում է աշխատավորության հասարակական կարծիքի, հասարակական սոցիալիստական միջավայրի հետամնաց, պասիվ, անհատապաշտորեն տրամադրված անդամների վրա ներդրելու այս հզոր միջոցի, նշանակությունը: Սոցիալիստական այս միջավայրի աղդեցությամբ, մի միջավայրի, վորտեղ ամեն ինչ խանդավառություն, աշխատանքային պաթոս և շնչում՝ կաղմավորվում է խորհրդային մարդու աշխարհայացքը, նոր վերաբերմունքը դեպի հասարակությունը, դեպի սոցիալիստական սեփականու-

թյունը: Աշխատանքային այս մթնոլորտը մինչեւ անդամնական հանցագործներին է վարակում: Բելումորստրոյը՝ դա վոչ միայն մի ջրանցք է, գործով անցնում են խորհրդային նավերը, սա մի ջրանցք է, վորով հազարավոր մարդկի քաղաքացիական մահից քաղաքացիական վերածնության են անցել: (Ծափահարությունների):

Բայց սոցիալիզմ կերտողների շրջանի մեծացմամբ, պրոլետարական դիկտատորայի պետության սոցիալական բաղիսի հետագա ընդլայնումով ամրապնդվում է նաև այս պետության պաշտպանումներությունը հանդեղ նրան դրսից շրջապատող կատաղի թշնամիների:

Կարմիր բանակը, վորակես պրոլետարական սեպության պաշտպանության որդան՝ իր զարդացման ընթացքում արտացոլել ե այն հսկայական ճանապարհը, վոր անցել են խորհրդային յերկիրն ու խորհրդային ժողովուրդը: Անդամնալիորեն անցել են այն ժամանակները, յերբ խորհրդային յերիտասարդ և դութե անցեն իշխանությունն ավելի շատ իր խանդավառությամբ և հսկայական զոհողությունների ու տանջանքների գնով, քան ռազմական տեխնիկայով պետք է հետ մզեր կապիտալիստական 14 պետության բանդիտային արշավանքները: Այժմ հեղափոխական ժողովրդի խանդավառությունը բազմապատկված է ամենաառաջավոր և հզոր տեխնիկայով: Մեր կարմիր բանակն առաջինն է յուրացնում, ներծծում ու իր մեջ արտացոլում, վորակես յուրահատուկ հրաշալի մի կերտվածք՝ մեր բոլոր տեխնիկա-տնտեսական և սոցիալական կերպափոխումները, մեր յերկրի կյանքի

ու տնտեսության բոլոր բնադավառների նվաճումները։  
Յեկանդասակարգ հասարակության ուղիով խոր-  
հուրդների յերկրի զարգացմամբ՝ Կարմիր բանակն ել  
նույնպես դառնում է մեր սոցիալիստական հանրապե-  
տությունների ժողովուրդների սոցիալապես ավելի ու  
ավելի միատարր մարտական կազմակերպությունը։

Դեռևս բոլորը չեն, վոր իրենց հաշիվ են տալիս  
այն մասին, թե սոցիալիզմի հաղթությունը  
ԽՍՀՄ-ում վորքան եւ անդրագարձել Կարմիր բանա-  
կի մարտունակության վրա։ Սոցիալիստական հարա-  
բերությունների հաղթության հետեանքով, յուրա-  
քանչյուր աշխատավոր իրեն զգում եւ յերկրի լիեբար-  
տերը, մի յերկրի, վորտեղ հողը, դործարան-հականե-  
րը, Փարբիկաները, խորհտնութեառությունները, արտա-  
դրության դործիքներն ու միջոցները պատկանում են  
մի մեծ կոլեկտիվի, վորի անդամն են նա։ Կարմիր բա-  
նակային-կոլտնտեսականը՝ դա կապիտալիստական  
յերկիրների գյուղացին չեն, վորը ճգմված են, հասո-  
չում են, սովում են և հաճախ իր իրածիթից ու իր՝ դե-  
րեդանաչափ պատիկ հոգակառից գենը չի տեսնում։  
Առայն գեղացին չեն, վորը, լսելով, թե վիթխարի  
գիսաստղը բաղիւվելու յերկրի հետ, և կործանվե-  
լու յե վսդջ աշխարհը՝ հանդիսատ կերպով ասում են-  
թու նա հարեան գյուղի դիմին ընկնի։ (Ծիծաղ)։  
Այս դարերի ստրկությամբ ու խավարով ձնշված, ա-  
ղոս ու, ինչպես նրա տնտեսությունը՝ սահմանափակ  
աշխարհայացքի տեր գյուղացին չեն։ Թող միայն թե  
իմ իրածիթը, իմ զանգակատունը, իմ՝ աղքակույյը  
վսդջ ու անհնաս մնան, իսկ մնացածը ի՞մ ի՞նչ դորձն  
ե։ Վոչ, կարմիր բանակայինը՝ դա մեծ բազմազի

մի ընտանիքի զինված ներկայացնեցիչը և մարտիկն  
ե, վորը յերկրից-յերկր, սահմանից-սահման ձգվող  
սի մեծ հողի, մեծ տնտեսության տեր ե, և վոչ թե  
թմբից-թումբ ընկած հողի ու տնտեսության տեր։  
(Ծափահարություններ)։ Խորհրդային Միության քա-  
ղաքացին, կարմիր բանակայինը, իր անձնական հոգ-  
ութը, լավագույն, եւ ավելի հարուստ և ուրախ կյան-  
ութը, լավագույն, եւ ավելի հարուստ և ուրախ կյան-  
ութի պլանը զիտում ե համայն Միության իր մեծ  
հողի, մեծ անտեսության մեծ շահերի ու լայն հորի-  
դոնների պրիզմայի միջով։ (Ծափահարություններ)։

Կարմիր բանակը, վորը ժողովրդից ե դուրս յե-  
կել, ժողովրդին ե ծառայում, ժողովրդի շահերն ե  
պաշտպանում՝ ժողովրդական մասսաների հոգացու-  
թյամբ ու սիրով թեավորված, աշխատավոր մարդ-  
կությանը ծառայելու նպատակներով վոդեորված՝  
արժանապատվությամբ, պատվով ու հպարտությամբ  
պահակ ե կանդնած՝ մեր սոցիալիստական հայբենիքը,  
համաշխարհային պրոլետարական հեղափոխության  
ամրոցը պաշտպանելու։ (Ծափահարություններ)։  
Յեղբայրական համերաշխության անխոելի կապերով  
շաղկապված բոլոր ճնշվածների, բոլոր շահագործ-  
վողների հետ, աշխարհի բոլոր ժողովուրդների հետ՝  
կարմիր բանակը հանդիսանում է իմպերիալիստական  
պատերազմների գեմ ժողովուրդների մղած աճող  
շարժման իսկական առաջավոր ջոկատը։

Արդյոք կարող եյին այս բոլոր պրոցեսները, վո-  
րոնք ԽՍՀՄ մեջ սոցիալիզմի տարած հաղթության  
հետեանքով են կատարվել՝ չանդրագանալ մեր կու-  
սակցության վրա, վորն այս հաղթության կազմա-  
կերպիչն ե յեղել։ Մեր կուսակցությունը վոչ միայն

մասսաներին տարել ե դեպի այս հաղթությունները, այլև նա ինքն աճում, կոփվում եր, քաղաքականապես միախմբվում, սոցիալիստական շինարարության պրոցեսի ընթացքում ընդլայնում եր մասսաների հետ ունեցած կապերը։ Մեր յերկրի մարդիկ անհյնդարձան սոցիալիստական կառույցի խորագույն կաղմակերպիչներ, պետական ականավոր գործիչներ, մասսաների տաղանդավոր առաջնորդներ, նրանք ավելի ևս լայն ծավալեցին աշխատանքի հատուկ, բուժմիջյան վոճը, վորը զուգակցում ե ամերիկյան գործարարությունը ոռուսական հեղափոխական թափի հետ, մեր ստորին աշխատողներն իրենց հանձնարարված գործի իմացությամբ, հաճախ կարող են իրենց դրանք գնել ամեն մի յերկրի բուրժուական մինիստրի։ (Ծափահարություններ)։

Լենինյան կենտրոնական կոմիտեյի զեկավարման կոնկրետությունն ապահովել ե մեր կաղըերի ճումը, արագովել ե այն ամենի ճիշտ ընտրանքը, ինչ տաղանդավոր ե բանվոր դասակարգի մեջ, անողոք ինքնաքնաղատությունը խանդարել ե լճացմանն ու ինքնագոհությանը, նպաստել ե մեր կուսակցական, խորհրդային, տնտեսակար աշխատավորների հետագա կատարելագործմանը։ Աշխարհում վոչ մի կառավարություն թույլ չի տվել և թույլ չի տալիս պետական, կուսակցական ու տնտեսակարական ապարատների թերությունների այնպիսի ազատ քննադատություն, ինչպիսին յեղել ե և կա մեր յերկրում։

Միաժամանակ մեր կուսակցությունն ընկեր Ստալինի զեկավարությամբ այս տարիներում կրթվել ե բոլշևիկյան խիստ անհաշտելիությամբ դեպի ամեն

տեսակի թեքումները, դեպի այն փորձերը, վորոնք նպատակ են ունեցել կուսակցության մեջ փոխանցելու խորթ ու թշնամի դասակարգերի ազդեցությունը։ Կուսակցությունը սոցիալիզմի համար պայքարելու ճանապարհից չեղելու կապիտալիստական վերասերման ճանապարհը։ Մեր կուսակցության շարքերի միանությունն անցյալում փորձել են սասանել թե՛ տրացկիստները, թե՛ գինովեկանները և թե՛ աջուկունիստները։ Այսոր այդ բոլոր ոպոզիցիաները գլուխովին չախախական առողջական մի չնչին բանդայի, վորոնց հակածեղափոխական բնույթին այժմ պարզ ե միլիոնալոր աշխատավորների համար։ Մասսաների առջև բացված ու խատավորների համար։ (Ծափահարություններ)։

Այսոր վոչ միայն մեր յերկրի, այլև ամբողջ աշխարհի աշխատավորները ԽՍՀՄ մեջ սոցիալիզմի ունեցած հաղթության փորձով կարողացել են ստուգել մեր կուսակցության այն գլխավոր գծի ճշությունը կուսակցությամբ։ Այս դիմավոր գիծը՝ միայն մեր կուսակցության գիծը՝ չեսա ամբողջ յերկրի զարկուսակցության գիծն ե, այս գիծը մեր ժողովրդի գացման դիմավոր գիծն ե, ամառ միս ու արյուն ե զարձնչող մեծամասնության համար միս ու արյուն ե զարձնչող մեծամասնության համար են մըցակցում մեր ըր, նրա իրականացման համար են մըցակցում մեր յերկրի բանվորներն ու կոլտնտեսականները, այս գիծն ե դարձել խորհրդային հայրենասիրության աղարկա, նա մեր ժողովրդի դիտակցության մեջ անուարկա, և աղջկական դիմավոր գիծը դիտակցության մեջ ան-

բաժան և մեր սոցիալիստական մեծ հայրենիքից :  
(Ծափահարություններ) :

Այսոր բոլշեիզմը — դա միայն քաղաքական մտքի հոսանք չե , նա ժողովրդական հուժկու շարժում է : Նա գուրս է յեկել կուսակցության ըջանակներից , դառնում է մեր յերկրի լայնագույն մասսաների աշխարհզգացումը : Այդ մասսաները , կուստոմս չկրելով հանդել , արդեն խորհում են մեր կուսակցության մտքերով , խոսում են բոլշևիկյան լեզվով , ուզում են դործել բոլշևիկների պես : Մեր կուսակցության շուրջը քանի զնում աճում է վոչ կուսակցական բոլշևիկների մի չերտ , վորոնց մասին իր վերջին ճառում խրսեց ընկեր Ստալինը : Ո՞վքեր են նրանք , այդ անկուսակցական բոլշևիկները : Փականակործներ են , ճախարակազործներ , պողպատագործներ , կթուհիներ , խոզապահուհիներ , մեր կոլտնտեսությունների անհանապահուհիներն են , մեր դաշտերի հարվածայիններ , կոլտնտեսային բրիգադիներ , տրակտորիստներ , կոմբայնավարներ , ինժեներներ , տնտեսավարներ , գիտականներ , սպառուներ , մեքենավարներ , պարագատափառներ , միջուկայիններ , չելյուսկինյաններ , վորոշիլովյան հրածիզներ , լավագույն վազողներ , բազորներ , ֆիզկուլտուրնիկներ , — սրանք մարդկեր են , վորոնք տողորված են ամեն ինչում ամենալավերից լինելու և մեր յերկիրը աշխարհում լավագույն յերկիրը դարձնելու ցանկությումը : (Ծափահարություններ) : Նրանց գասափարակել են մեր կուսակցությունն ու լենինյան կոմյերիտմիությունը , նրանցից յուրաքանչյուրն իր մեջ կրում է այն հասկությունների մասնիկները , վորոնք կաղմում են բոլշևիկների

տարբերիչ գծերը : Նրանք այն դարավրջանումն են մեծացել , յերբ Հերոսությունը դառնում է մասսայական ու սովորական յերկույթի : Նրանց հերոսական գործերն են բոլշևիզմի հետ նրանց զողովը :

Մեր կուսակցությունն առաջվանից ե'լ ավելի մոտիկ է դառնում ժողովրդական մասսաներին , վորոնց պետք չեն վոչ կապիտալիստական յերկիրների կրոնի միասիկան , վոչ ել պատրամենտական կեղծ դեմոկրատիայի բազմակուսակցական սիստեմը : Ժողովրդական ու եղերգներն ե'լ ավելի մոտ ու սերտուրեն են մերձնում բանվոր դասակարգի ավանդարդեն , քան առաջ : Կուսակցության ու ժողովրդի միջև յեղած այս կենդանի փոխազդեցությունն աշխարհիս վոչ մի յերկրում չկա . չկա , չի յեղել և չի ել կարող լինել այսպիսի փոխազդեցություն ժողովրդի ու բուրժուական կուսակցությունների միջև , վորոնք կամ մրցող կլանների սիստեմ են հանդիսանում բուրժուական զեմոկրատիայի ժամանակ , կամ կուսակցություն — կաղարձա ֆաշիստական գիկատառայի ժամանակ :

Պրոլետարական գեմոկրատիայի զարգացումը , աշխատավորության քաղաքական ու կուտուրական աճումը մեր ժողովրդի հակայական խավերի կուսակցության ազգեցության տակ ներքաշվելը կոմունիստներին , վորպես մասսաների առաջնորդների ու կաղմակերպիչների , միենալոյն ժամանակ առաջադրում են ավելի բարձր սպահանջներ : Մասսաներն այժմ այն չեն , ինչ ելին միքանի տարի առաջ : Կուսակցության գլխավոր զծի համար միայն պիտացիա անելը բավական չէ , կուսակցական ստաժն ու հեղափոխական ծառայությունները , թեև հույժ հարգելի բաներ են , բայց

սա բնավել ել առենը չե այն մասսայի համար, վորը սոցիալիզմի համար ագիտացիա յե անում սոցիալիստական շինարարության գործով: Այժմ հարյուր հազարավոր վոչ-կուսակցական բոլցեկներ ունեն իրենց սոցիալիստական ծառայությունները, ունեն սոցիալիստական հասարակության հարվածայինների իրենց աշխատանքային ստաժները: Անկուսակցական բոլցեկների այդ մասսայի մոտ հեղինակությունը ունենալու համար կոմունիստն ավելի բարձր ցուցանիշներ պետք է տա թե՛ սոցիալիզմին իր նվիրված լինելու, թե՛ իր գաղափարային-քաղաքական մակարդակի և թե՛ իրեն հանձնարարված գործի տեխնիկային տիրանալու առահճանի վերաբերմարթ: Իսկ այս բանին չի կարելի հասնել, յեթե կուսակցական կազմակերպություններն ել ավելի չբարձրացնեն կուսակցական աշխատանքի վորակը, ե՛լ ավելի չաշխուժացնեն կուսակցական կյանքը, ե՛լ ավելի մեծ բարձրության չհասցնեն կուսակցական դաստիարակությունը:

Պրոլետարական գեմոկրատիայի ընդլայնումը ամբողջ ուժով հարվածում է մասսաներից կոմունիստների կարված լինելուն, բյուրոկրատիզմին, բարձրաստիճանյան սնապարծությանը, մեր կուսակցական բորոք կազմակերպություններին ստիպում է ել ավելի լավացնել մասսաներին զեկավարելու նրանց սիստեմը: Մեր մասսաները՝ դա այն մասսաները չեն, վորոնց հարկավոր եր միայն նվաճել գեպի պրոլետարական հեղափոխության կողմը, — դրանք սոցիալիստական անդասակարգ հասարակություն կերտիչների մասսաներ են: Իսկ սոցիալիստական անդասակարգ հասարակություն կառուցել՝ դա վոչ միայն դասակարգերը

վերացնելն է, այլև կապիտալիզմի մնացուկները եկոնոմիկայում և մարդկանց գիտակցության մեջ հաղթահարելը: Բայց կոմունիստը մասսաների մեջ չի կարող պայքարել այս մնացուկների հաղթահարման համար, յեթե նա անձնական որինակով ցույց չտաքաղաքական, հասարակական կյանքում, իր կենցաղում, շրջապատող մթնոլորտի հետ ունեցած իր բոլոր հարաբերություններով, թե այդ մնացուկները նա հաղթահարել է կամ հաջողությամբ հաղթահարում է: Սրանից ել բղասում է մեր կուսակցության անդըրդվելի խստությունը գեպի իր բոլոր անդամները՝ վերցրած նրանց ներքին բարոյական-քաղաքական նկարագրի իմաստով: Սա Սավոնարուայի քրիստոնեյական անիմաստ ասկիտիզմը չե, սա պայքար է հանուն սոցիալիստական մարդու, վորն ազատագրվում է կապիտալիստական հասարակության արատավոր ժառանգությունից:

Մարդկանց սոցիալիստական այս վերադաստիարակությունը, վորին ի սպաս են դրված մեր գլուխը, մեր մամուլը, մեր արվեստը, մեր պետական ամբողջ ազարատը՝ անխզելիորեն կապված է մեր ժողովրդի գիտակցության մեջ միջազգային պրոլետարական համերաշխության պարտականություններն արմատավորելու հետ: Մեր կուսակցությունը և խորհրդադային յերկրի աշխատավորները համաշխարհային պրոլետարիատի վերաբերմարթ ունեցած իրենց պարտավորություններն ամենից բարձր են գնահատել, և նրանք այդ պարտավորություններն առանձնապես բարձր են գնահատում այժմ, յերբ աշխարհը մոտենում է հեղափոխությունների ու պատերազմների

յերկրորդ տուրին, յերբ «ո՞վ-ում»-ի հարցն արտօնավոր սրությամբ գրված է միջազգային ասալարեղում:

Դասակարգային ջախջախված թշնամու մնացորդների առկայությունը, կապիտալիզմի մնացուկները եկոնոմիկայում ու մարդկանց գիտակցության մեջ, կապիտալիստական ողակումը ստիպողականորեն պահանջում են կոմունիստից, ցույց տալ դասակարգային ամենուրյա զգունություն, առավել մեծ զգունություն՝ այն պատճառով, վոր ժողովրդական հոկամասաների՝ դեպի սոցիալիզմի կողմը կատարած շըրջադարձը կարող ե պատրանքներ ծնել այն մասին, թե ընդմիշտ վերջ ե տրված դասակարգային պայքարին, թե դասակարգային ջախջախված թշնամին հնագաղորեն կիսազարդի, թե մեր կուսակցությունն առաջայի վերաբերմամբ ապահովագրված ե թեքումներից: Բնկեր Ստալին հաճախ նախադգուշացրել ե մեր կուսակցությանը, վոր Խորհրդային պետության հղորության աճումն առաջացնելու յե մեռնող դասակարգերի գիմազրությունը, և հենց այն պատճառով, վոր նրանք մեռնում են և ապրում են վերջին որերը՝ նրանք հուսահատորեն պետք ե դիմեն պայքարի ամենածայրահեղ միջոցներին:

Բայց աշխարհում չկա այնպիսի ուժ, վորը կարողանար ընկճել բոլշևիկների կուսակցությունը, չկան այնպիսի դժվարություններ, վորոնք կարողանային սասանել մեր կուսակցության շարքերի միասնությունը, մեր կուսակցության, վորի միաձուլությունն ապահովված ե վոչ միայն նրա դլիսավոր դժի ճշությամբ, այլև յերկրի սոցիալական կազմի աճող

միասնությամբ և խորհրդային բնլոր հանրապետության մնակչության մեջամասնության շահերի միասնության իրագործմամբ:

Սրանք են խորհուրդների յերկրում սոցիալիզմի համար մղվող պայքարի հանրագումարները, վորոնք ներկայումս ահազին ազգեցություն են գործում ամբողջ միջազգային կյանքի վրա, վորոնք նոր ետապ են բացում համաշխարհային պրոլետարական հեղափոխության զարգացման մեջ:

### III. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ԵՏԱՊԸ

ԽՍՀՄ-ում սոցիալիզմի ունեցած հաղթությունը նոր ետաղ և բաց անում համաշխարհային պրոլետարական հեղափոխության զարգացման մեջ՝ ուժեղացնելով աշխատավոր մասսաների հեղափոխական դիտակցության աճումը, առաջացնելով կապիտալիստական բոլոր յերկրներում հզոր չարժում դեպի սոցիալիզմը, դարձեցնելով ժողովուրդների ձգտումը դեպի ԽՍՀՄ, վորպես խաղաղության ու ժողովուրդների աղատության պատվար, վորպես պատվար ընդուն Փաշիզմի ու խմբերիալիստական պատերազմի։ Այս շրջադարձը գլխապառույտ արագությամբ չեւ, վոր կատարվում եւ, նա չի նշանակում, թե մասսաները մեկննեն անցնում պրոլետարական դիկտատորայի համար մղվող հեղափոխական պայքարի դիրքերը, այս շրջադը միշտ եւ հարթ չի ընթանում, այլ հանդիպում եւ հակադործող ուժերի դիմադրությանը, բայց նա կատարվում եւ ԽՍՀՄ-ում սոցիալիզմի ունեցած հաղթությամբ նոր մեծ թափ ստանում։

Այս շրջադարձը զարգանում է կապիտալի աշխարհի ու սոցիալիզմի աշխարհի միջև յեղած հակա-

սությունների խորացման ու սրման պայմաններում, ինչպես առանձին յերկրներում, այնպես և միջազգային ասպարեզում մզկող դասակարգային կատաղի պայքարի իրադրության մեջ։ Նրա զարգացումն ամեն տեսակի միջոցներով արգելակել և արգելակում է սոցիալ-դեմոկրատիան, վորը լայն մասսաներում դեռևս բավականաչափ ուժեղ դիրքեր ունի պահած։ այս շրջադարձը միենույն ժամանակ տեղի յէ ունենում ֆաշիստական աճող շարժման պայմաններում, մի շարժում, վորի ողնությամբ բուրժուազիան վորձում է կտրել հեղափոխական վերելքի ճանապարհը։

Լենինն ասում եր.

«10—20 տարի ճիշտ փոխարարերություննեներ գյուղացիության հետ, և ապահոված և հաղթությունը համաշխարհային մասշտաբով (անդամ պրոլետարական հեղափոխությունների ձգձգման գեպքում, վորոնք աճում են), այլապես՝ սպիտակ-գվարդիական տեսորի 20—40 տարվա տանջանքներ»<sup>1</sup>։

Պարզաբանելով Լենինի խոսքերը՝ ընկեր Ստալինը 1926 թ. գեկտեմբերին կոմիտենի Գործկոմի VII պլենումում հարց է դնում։

«Իսկ ի՞նչ են նշանակում հաղթություն «համաշխարհային մասշտաբով»։ Արդյո՞ք աս նշանակում ե, վոր այսպիսի հաղթությունը հակասարար և սոցիալիզմի հաղթությանը մի յերկրում։ Վոչ, չի նշանակում։ Լենինն իր յերկերում խստիվ տարբերում ե՝ մի յերկրում սո-

յիալիզմի ունեցած հաղթությունը «համաշխարհային մասշտաբով» հաղթությունից։ Առաջնորդ «համաշխարհային մասշտաբով» հաղթության մասին կենին ուղարկում է ասել, թե սոցիալիզմի հաղթությունը մեր յերկրում, սոցիալիստական շինարարության հաղթությունը մեր յերկրում՝ միջազգային այնպիսի հակայական նշանակություն ունի, վոր նա (հաղթությունը) չի կարող մեր յերկրով սահմանափակվել, այլ պետք է հուժկությունում առաջ բերի գեպի սոցիալիզմը կապիտալիստական բոլոր յերկիրներում, ըստ վորում՝ յեթե այդ հաղթությունն ըստ ժամանակի չի կուղաղիսում պրոլետարական հեղափոխության հաղթությանը մյուս յերկիրներում, ապա նա համենայն դեպք պետք է բաց անի մյուս յերկիրների պրոլետարների հուժկությունում գեպի համաշխարհային հեղափոխության հաղթությունը»<sup>2</sup>։

Այսոր կատարվում են Լենինի ու Ստալինի մարդարակում և նշանակությունը ի Ս Հ Մ մէջ՝ համաշխարհային նշանակություն ունեցող հաղթություն է։ Այս հաղթությունը տակագին չի հասցել կապիտալիզմի տապալմանն ամբողջ աշխարհում։ Բայց գեպի սոցիալիզմը յեղած հուժկությունը կապիտալիստական բոլոր յերկիրներում ընդունում է և ընդունելու յէ այնքան մեծ թափ, վորքան վոր խորն է գառնում հակաղությունն առաջադիմող սոցիալիստական աշխարհի՝ նրա պրոլե-

1 Լենինյան ժողովածու՝ IV, եջ 374։

2 Ստալին, «Դարձյալ սոցիալ-դեմոկրատական թեքման մասին»։

տարական ծավալուն դեմոկրատիայով և դեպի կոր-  
ծանում դիմող կապիտալիստական աշխարհի միջն՝  
նրա տանջալից սպիտակ-գվարդիական-ֆաշիստական  
տեռորով։ Մարդկությունը պատմական այն սահմա-  
նին է մոտեցել, յերբ աճող վոչ մի ռեակցիա ի վե-  
ճակի չե կասեցնելու ժողովրդական մասսաների չըր-  
ջադարձը դեպի սոցիալիզմը։ Ամբողջ աշխարհի աշ-  
խատավորության գիտակցության մեջ կատարված  
այս մեծ շրջադարձը դեռ ամբողջովին ու լիովին չի  
ծավալել։

Համաշխարհային պրոլետարական հեղափոխու-  
թյան զարգացման այս նոր եպօխան հաճախ դեռևս  
չեն զգում անդամ լավագույն մարդիկ-կոմունիստնե-  
րը, վորոնց գիտակցության վրա ճնշում են «սպի-  
տակ-գվարդիական տեռորի տանջանքները» և այն  
մասշտաբները, վորոնցով նրանք անցյալում մոտե-  
նում եյին ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության  
նշանակությունը չափելուն։ Իսկ չե՞ վոր մենք ապ-  
րում ենք մարդկության կյանքում յեղած այս մեծ  
շրջադարձի միայն սկզբում։ Բայց արդեն այսոր փուլ  
են գալիս միլիոնավոր մարդկանց դարերով արմատա-  
ցած պատկերացումներն ու հասկացողությունները  
կապիտալիստական կարգերի հավիտենականության և  
անսասանության մասին։ Մարդկային հսկայական  
մասսաներ կասկածանքի տակ են զնում այնպիսի հա-  
սարակակարգի բանական ու նպատակահարմար լինե-  
լը, վորը հենված է մարդկանց հարուստների ու աղ-  
քատների, ձբիակերների ու աշխատանքի պարիսերի,  
ստրկատերերի ու ստրուկների բաժանելու վրա։ Խոր-  
տակվում ե տիրապետող դասակարգերի, նրանց պե-

տության, նրանց իշխանության, կապիտալիստական  
հասարակակարգն որհնող նրանց յեկեղեցու, այդ  
հասարակակարգն արդարացնող բուրժուական գիտու-  
թյան, այդ հասարակակարգին ի սպաս դրված բուր-  
ժուական կուլտուրայի հեղինակությունը։

Նրանց ասում եյին, թե սոցիալիզմը՝ դա համ-  
ընդհանուր գեղրադացիա յե։ Կենդանի փորձից  
նրանք տեսնում են, վոր սոցիալիզմը՝ դա ժողովրդա-  
կան մասսաների վերելք է, բարգավաճում ու վերա-  
ծնում։

Նրանց ասում եյին, թե սոցիալիզմը՝ գույքի բա-  
ժանումն է, կանանց հանրայնացում, անհատականու-  
թյան ծիլերը խեղդող կոպիտ մատերիալիզմ, անձնա-  
կան աղատության կորուստ, հասարակական կազար-  
մա, — նրանք տեսնում են, վոր սոցիալիզմը՝ դա կո-  
լեկտիվ սեփականություն է, վորը հաղթահարում ե-  
րականացն ընչափացության յեսամոլությունը, դա  
կանանց իսկական սոցիալական հավասարությունն է,  
մոր մեծ պաշտամունք, հերոսական նոր մարդու-  
ծնունդ, մի մարդու, վորը աշխատավորների աղատա-  
գրության համար պատրաստ ե գերմարդկային սրի-  
պագործություններ կատարելու։ Նրանք տեսնում են,  
բազործություններ կատարելու։ Նրանք տեսնում են,  
վոր սոցիալիզմը՝ դա աղատություն է, վորն ապա-  
հովված է մարդը մարդուն չստրկացնող հասարակա-  
կարգի կողմից, սոցիալիզմը վոչնչացումն է կազար-  
մային ստանդարտի և մասսաների ստեղծագործու-  
թյան մի հզոր թափ է, վորը պայմանավորված է ա-  
մեն մի անհատականության աճմամբ։

Յեվ այս յերեկի պատմածքը հասարակական նոր,  
րանական, արդարացի կացութաձևելի մասին մասսա-

ները գրքերից չե, վոր կարդում են, մարդկային վերակերտված՝ հասարակության հեռավոր իդեալը նկարագրող թուժամ Մորի, Սեն-Սիմոնի եջերին չե, վոր ունկընդգրությամ են, —Հարյուր յոթանասուն միլիոն ժողովրդի կյանքն ու պայքարն են, վոր ցույց են տալիս ամբողջ աշխարհին այս ժողովրդի ստեղծած, միս ու արյուն դարձած, տանջանքներում, դժվարություններում ու հաղթանակների ուրախություններում ծնված հասարակակարգը՝ նրա ծակոտիներում անցյալց մնացած անցնող խոցերով, նրա ներկայի ամրապինդ մկաններով և նրա ապագայի անսպառ ուժով:

Իր ստեղծարար զործով, վորը կարելի յէ շոշափել ձեռքերնդ, տեսնել աչքերով, իմաստավորել բառնականությամբ՝ այս ժողովուրդը՝ ցույց ավեց, վոր սոցիալիզմն ապահովում է արտադրողական ուժերի հզոր զարգացումը, այնինչ՝ կարիտարիստական աշխարհում նրանք կորչում ու կործանվում են: Նա ցույց տվեց, վոր սոցիալիստական տնտեսությունը չգիտել գերարտադրության ճգնաժամ, վոր գործադրկության պատուհասը ժողովրդի լավագույն, աշխատավորական մասը սոցիալիզմի ժամանակ ծանր աղետների չի գատապարտում, վոր կարիքը, սովոր և մահը չեն շրջում բանվորական թաղերում, առանց վառողի ու ծխի չեն մեղնուում բանվոր սերունդներին, վոր ԽՍՀՄ միակ յերկիրն ե, վորտեղ հացի ու աշխատանքի իրավունքը նրա ամբողջության համար իրադարձություններից ամրապնդություն ու լիովին:

Յնկ այս ժողովուրդները, վոր իրենց վրա կը ունի կապիտալիզմի բեռլ նրա ճգնաժամներով ու զործադրկությամբ՝ սկսում են մտնել մի շարժման մեջ,

վորի մասին խոսեց Ստալինը: Սոցիալիզմը նրանց համար՝ դա միայն մի ուսմունք չե, վորը հիմնավորման դա մտահայեցողական կերպով, մի դոկտրինավածք է մտահայեցողական կերպով, մի դոկտրինավածք է արդեն Բերեզինայից մինչև Վլադիվոստոկ ձըդտեղ և արդեն Բերեզինայից մինչև Վլադիվոստոկ ձըդտեղ մի հոկայական տերիտորիայի վրա — նա արդեն վող մի հոկայական տերիտորիայի վրա — նա արդեն վոր մի հոկայական տերիտորիայի վրա — նա արդեն հարյուր յոթանասուն միլիոնանոց ժողովրդի կյանքն ե, հարյուր յոթանասուն միլիոնանոց ժողովրդի կյանքն ե, նա մի յերկը փորձն ե, վորը նոր սոցիալիստական հասարակություն կառուցելու մի վիթխարի լարուատորիա յե հանդիքանում: Սոցիալիզմը բոլոր ժողովուրդների համար կենսական անհրաժեշտություն ե, վորդների համար կենսական անհրաժեշտություն ե, նա նրանց միակ հույսն ե՝ աղքատացող մասսաների հուսահատության ովկիանոսում, նա նրանց վրկության փարսոն ե այս աշխարհում, վոր ճեղքվածք ստացած նաև նման հատակն ե իջնում:

Բայց այս հարյուր յոթանասուն միլիոնանոց ժողովուրդը, անցյալում տրեխներ, վոտափաթաթաններ և տնահայուս չուխա հաղնող ժողովուրդը, մի ժողովուրդ, վոր ցարական ուժեիմի սովոր արիներին վուրդ, վոր ցարական ուժեիմի սովոր թայլ (լեօնելո) ու կայրի կաղին եր ուտում, վորը թայլ (լեօնելո) ու կայրի կաղին եր ուտում, վորը մասնված եր ուժիսան խրճիթի, կեղտոտության ու գարշահոտության, ճապի աղոտ լույսի՝ այժմ լույսարշահոտության, ճապի աղոտ լույսի՝ այժմ լույսարշահոտության միակ յերկիրն ե, վորտեղ հացի ու աշխատանքի իրավունքը ինդիրը, քան արտադրողական ուժերի դարպացումն ինդիրը, — իր կենսական մակարդակը մի այնպիսի բարձրության հացնել, վոր աշխարհում կապիտալիստարության հացնել, վոր աշխարհում կապիտալիստարության հացնել, վոր անցնել, ինչուս վոր անցնել ե կապիտալիստարության հացնել, վոր անցնել միլիարդներով տալիզմը: Սոցիալիզմը չի ունեցել միլիարդներով

վոսկի, վոչ ել կապիտալիստական պետությունների գարավոր փորձը, բայց այն, ինչ նա արել ե մասսաների համար խորհրդային իշխանության մի քանի տարիների ընթացքում՝ պատմության վոչ մի որինակի հետ համեմատելի չե:

Թող վոր այդ ինդիբը սոցիալիզմն այսոր չի լուծել ամբողջովին ու լիովին: Յեթե նա այն լուծեր՝ աշխարհն այժմ այլ տեսք կունենար, կապիտալիզմի փորձը վերջնականապես տանուլ արված կլիներ, համաշխարհային պրոլետարական հեղափոխության գործըն առաջ կշարժվեր հոկայական քայլերով: Մեր սոցիալիստական յերկրի զարգացման նոր չքանուը, վորն արտահայտված ե մարդու վերաբերյալ հոգատարության ստալինյան լոգունով՝ վկայում ե այն մասին, վոր այդ ինդիբը մոտակա տարիներում կլուծվի:

Բայց իշխող գասակարգերն արդեն այսոր ըսկում են կորցնել աշխատավոր մասսաներին կառավարելու դեկը, մասսաներ, վորոնց շարժման մեջ են դնում վոչ թե կոմինտերնի տանյակ յերեակայական գործակալները, այլ սոցիալիստական հաջողությունները ԽՍՀՄ ժողովուրդների, վորոնք աշխատավորների ձեռքբերով բոլոր աշխատավորների համար անշեղորեն մարմնավորում են կյանքում սոցիալիստական բարեկեցությունը: Յեվ բանվորական մասսաներն ամրող աշխարհում սկսում են շարժման մեջ մտնել:

Կապիտալիզմը նրանց մինչսպատերազմյան կենսական մակարդակն արդեն չի առահովում և յերբեք ել չի ապահովի: Յեթե բուրժուազիան ճղնաժամի ուղեկիցների ճանկերից ժամանակավորապես նույնիսկ դուրս պրծնի ել՝ նա բանվորներին չի վերադանի

անդամ այն կենսամակարդակը, վոր նրանք ունեյին մինչև 1929 թվականի ճղնաժամը: Այժմ վոչ թե յեվրոպական բանվոր գասակարգն ե բարձրանում մինչև ամերիկյան բանվորի կենսամակարդակը, ինչպես նախագուշակում եյին ու ֆորմիստները, այլ ամերիկյան բանվորն ե իջնում մինչև յեվրոպական բանվորների մեծամասնության դրությունը, ինչպես նախատեսել եյին բոլշևիկները: Վոչ թե զաղութային բանվորներն են «ապագաղութացվում» և հասնում յեվրոպական սպիտակամորթ բանվորի աշխատավարձին, այլ յեվրոպական սպիտակամորթ բանվորն ե ավելի ու ավելի գլորվում դեպի գաղութային կուլի դրությունը:

Արդեն կապիտալիստական մի շաբք յերկիրներում յեվրոպական բանվորի հետ վարվում են վորպես նվաճված զաղութի հետ: Ֆաշիստական կառավարությունները նրան զրկում են դասակարգային սպայքարի տանյակ տարիներով պոկած բոլոր նվաճումներից, ցրում են բանվորական կազմակերպությունները, փակում են բանվորական մամուլը, սպանում են բանվորական շարժման գործիչներին, ձեռնարկություններում վերականգնում են ձեռնարկատիրոջ անսահմանափակ իշխանությունը, բանվորների վրա ուղղմատուցանքներ են զնում այսպես կոչված «կամավոր» հանումներ անելով մուրացկանային աշխատավարձից, հարկադրական աշխատանքի ճամբարներ են ստեղծուած բանվորների համար, ծաղր ու ծանակում են նրանց դասակարգային գիտակցությունը և ստորացնում են նբանց մարդկային արժանապատվությունը՝ փորձելով բանվորական մասսաների մեջ ար-

մատավորել այլ ժողովուրդների գեմ կատաղած և  
փրփուր ժայթքող շան բարբարոսական չոփինիստական  
գողափարախոսությունը :

Բայց Փաշիզմը՝ դա վոչ միայն ներքին պատե-  
րազմ և բանվոր զասկարպի գեմ, դա արուաքին իմ-  
պերիալիստական պատերազմներ են :

Բանվոր զասակարգը տեսնում է, վոր բուրժուա-  
զիան նրան քարչ և տալիս չտեսնմած ուժգնություն և  
անցյալ պատերազմների պատմության մեջ չեղած չա-  
փեր ունեցող սաղմական աղետների : Մի կողմից սո-  
ցիալիզմը ԽՍՀՄ մեջ, և մրու կողմից՝ կարպատից-  
մի հարձակումը, Փաշիզմը և պատերազմները կապի-  
տալիստական յերկրներում—ահա թե այժմ ինչն է  
հեղափոխականացնում համաշխարհային բանվոր դա-  
սակարգը :

Յեկ բանվոր զասակարգն ավելի ու ավելի յի  
ուղղում իր հայացքը զեպի սոցիալիզմի յերկիրը, վո-  
րովհետեւ նրա մեջ և նա տեսնում այն նյութական  
մեծ ուժը, վորը փակում է կարփառալի կամայակա-  
նության համաշխարհային ուեակցիայի սանձարձա-  
կության և խմբերիալիստական նոր պատերազմների  
սկսման ճանապարհը : (Ծափահարություններ) :

ԽՍՀՄ մեջ սոցիալիզմի ունեցած հաղթությունը  
շարժման մեջ և զնում աղբարային դաժանագույն  
ճնշաժամից տառապող գյուղացիության լավագույն  
մասսաները : Միլիոնավոր գյուղացիների սնանկացու-  
մըն արագանում է չնորհիվ հենց գյուղացիական մա-  
նրը սեփականության բնույթի, մի սեփականու-  
թյուն, վորը չի կարող բարդ մեքենաներ դործաղբել  
և այս իսկ պատճառով անշահավետ և դարձնում

գյուղացիական աշխատանքը : Բայց կապիտալիստա-  
կան յերկիրների գյուղացին տեսնում և խորհրդացին  
յերկիրը, վորտեղ գյուղացիական մասնավոր տնտե-  
սությունների վորպես կողեկտիվ տնտեսություն միա-  
վորելը թույլ և տարիս մեխանիզացիայի յենթարկել  
հողագործությունը, վերացնում և դյուղանանառու-  
թյան ցածր տեխնիկայի և արդյունաբերության բար-  
ձր տեխնիկայի միջն յեղած հակասությունը, բարձ-  
րացնում և գյուղացիական աշխատանքի արժեքը : Նա  
տեսնում է, վոր կուլակության վորպես զասակարգի  
վերացման քաղաքականության հետեւանքը յեղավ շա-  
հագործման վոչնչացումը գյուղում, վոր կողեկտի-  
վացման պայմաններում այդ քաղաքականությունն  
արժատապես չնչել և գյուղի չերտավորման ամեն մի  
հնարավորությունն, պայմաններ և սուեզել կոլտնտե-  
սային մասսաների ունենոր կյանքի համար : Յեկ կո-  
լեկտիվացման հետալա հաջողություններից Խորհր-  
դային Միության մեջ՝ քանի զնա ավելի յի խորտա-  
կելու կապիտալիստական յերկիրների գյուղացու նա-  
խապաշարմունքները սոցիալիզմի գեմ : Նա իր աշխա-  
տավորական մեջքով իմացել և, վոր այդ սեփականու-  
թյունը ձեռնասալլակին զամփած տաժանակը կա-  
պանքն է : Նրան վախեցնում է յին ԽՍՀՄ գյուղատըն-  
տեսության սոցիալիստական վերակառուցման առա-  
ջին դժվարությունները : Բայց քանի զնում ավելա-  
նում էն նրա սեփական տնտեսության դժվարություն-  
ները . բանկերի ու վաճառառուների վերաբերմաքը ու-  
նեցած Փինանսական պարտարեսոնվածությունը, նրա  
սորկացումը վերապնորդների կողմից, չուկայի ցածր  
զները, նրան խեղդող բարձր վարձավճարները : Նա

Հեր հավատում կոլեկտիվ աշխատանքի հնարավորությանը՝ կարծելով, թե համընդհանուր պարապության թագավորություն կլինի: Իսկ նրան ի՞նչ և տալիս նրա տաժանակից աշխատանքը, բացի կարիքից, ցալ ու վշտից, և աշխատանքի կոշտուկներից:

Նա գտնում էր, վոր գյուղատնտեսության մեջ սոցիալիզմի հետեւանքը համընդհանուր աղքատությունը կլինի: Բայց կապիտալիզմը նրան արդեն մաքրապես կողոպտել է, մուրացիկ և գարձրել միլիոնավոր գյուղացիական ընտանիքներ: Նա կարծում էր, թե Փաշիզմը նրա շահերն եւ պաշտպանում՝ հռչակելով, վոր գյուղացիական ունեցվածքի ժառանգելու իրավունքը պատկանում եւ ավագ վորդուն: Բայց ի՞նչ են անելու գյուղացու մյուս ընչափուրկ զավակները այն ժամանակ, յերբ քաղաքներում մասսայական դորժագրեկություն եւ տիրում: Իսկ խորհուրդների յերկրի կոլտնտեսային հասարակակարգը ամեն որ ցույց է տալիս կապիտալիտական յերկիրների գյուղացիությանը կոլեկտիվ տնտեսության առավելությունները, վոր հաղթահարել է իր վերակառուցման շրջանի դժվարությունները: Ստալինյան կոլտնտեսային նոր կանոնադրությունը, վոր կառուցված է հասարակական խթաններն անձնական շահագրգուվածության հետ զուգակցելու վրա՝ կոլտնտեսություններում առաջացնում եւ աշխատանքային խանդակառության նոր ալիք: Կոլեկտիվացումը որ ավուր քանի գնում ավելի ու ավելի յեշուու զալիս դեպի ամբողջ աշխարհի գյուղացիական մասսաները գյուղի բարեկեցության, ունեօր կյանքի կողմով ու կուտուրական մակարդակի աճման կողմով:

Շարժման մեջ եւ մտել քաղաքների մանր բուրժուազիան, վորի հույսերը չարաչար ի դերեւ հանեց Փաշիզմը՝ սկսած այն որից, յերբ նա գտնվում է իշխանության գլուխիս: Քանի՞ ունիվերսալ խանությներ են վոչչացել Փաշիմտների՝ իշխանության գլուխիս կանոնելուց հետո (Գերմանիայում): Արդյոք թեկուղ մի մաղ ընկե՞լ եւ բորսայական սպեկուլյանտների, բանկիրների ու վաշխառուների գլխից, թե՞ մաղերի հետ միասին ընկել են այն գրոհայինների գլուխները, վորոնք նոր «հեղափոխություն» ելին պահանջում բանկային տնորինողների և բորսայի ավագակների գեմ: Մանր առևտրի պարտքերից վո՞րքանն եւ ջնջել Փաշիստական իշխանությունը, թե՞ այդ իշխանությունը թեթեացում եւ տվել միայն տրեստներին ու բանկերին: Վո՞րքան հարկեր են իջեցրել քաղաքների աշխատավոր մանր մարդկանց համար, թե՞ այդ հարկերը իջեցրել են միայն միլիոնատերերի համար: Մանր բյուրգերների քանի՞ զակակներն իրենց համար պատշաճ տեղն են գրավել «Յերբորդ կայսրության» պետական ազգարատում, թե՞ պետական յունկերներին պատկանող վոսկե յերիտասարդությունն եւ, վոր արտամզում եւ խարգած գրոհայիններին:

Իսկ սոցիալիզմն իրապես վերացրեց բանկիրներին ու սպեկուլյանտներին, իրական հեղափոխություն կատարեց կապիտալի գեմ, իրապես ապահովեց մարդկային արժանավայել կյանք աշխատավոր մարդկանց համար՝ մտցնելով նրանց սոցիալիտական շինարարության մեջ պրոցեսի մեջ, իրապես տվեց նրանց զագակներին բանվորագյուղացիական բուհերում սո-

վորելու հնարավորություն՝ բաց անելով նրանց առջև  
սոցիալիստական լուսավոր ապագա:

Դեպի սոցիալիզմն ե շուրջ գալիս նաև ինտելիգեն-  
ցիայի լավագույն մասը, վորը տեսնում ե, վոր մի-  
այն սոցիալիզմը չդիմե գիտնականների, ինժեներնե-  
րի, տեխնիկների, գրողների, նկարիչների, դերասան-  
ների գերարտանդրություն, վոր միայն սոցիալիզմի  
որոք տաղանդը, ընդունակություններն ու աշխա-  
տանքը, և վոչ թե փողի իշխանությունն ու աշխարհի  
զորեղների աջակցությունն են ճանապարհ բաց անում  
ձիրքի տեր յերլտասարդներին, վոր միայն սոցիալիս-  
տական հասարակակարգն ե ապահովում նոր, սոցիա-  
լիստական կուլտուրայի իսկական ծաղկումը, ստեղ-  
ծակործության համար տալլս ե հուժկու խթաններ  
և բաց ե անում լայն հեռանկարներ, միայն այդ հան-  
րակարգն ե, վոր արթնացնում ե ժողովրդի մեջ նիր-  
հող ուժերը, փորում-հանում ե ժողովրդական իսկա-  
կան ստեղծակործության ազբյուրները: Յեվ նրանք,  
այդ լավագույն մարդիկ, վոր հուսալքլած են ճար-  
պակալած քաղքենիության, Փաշխտական խավարա-  
մոլության աշխարհից՝ փախչում են խարույկներից,  
վորտեղ այրում են մարդկային միտքը, Փաշխտա-  
կան կացիններից, վորոնցով ջարդում են ըմբոսա-  
գանգերը, արյունալի թուք ու մրից, վորով այլասեր-  
ված բանդաները ծածկում են մարդկային կուլտուրան,  
փախչում են դեպի այն յերկիրը, վորտեղ գնահատում  
են վոչ միայն քաղաքագետներին, բանվոր գասակարգի  
կազմակերպիչներին, այլև Վոլտերներին, Եյնշտեյնե-  
րին, Ռուլաններին, Բարբյուներին ու Գորկիներին:  
(Ծափահարություններ):

Թե մեծ և թե փոքր ժողովուրդները շարժման  
մեջ են մասնում, վորովհետեւ նրանց աչքի առաջ  
ԽՍՀՄ-ն իր տնտեսական սիստեմն ամրապնդում է  
վոչ թե արտաքին շուկաներ նվաճելով, վորոնց պատ-  
ճառով կապիտալիստական աշխարհում կատաղի պայ-  
քար ե տեղի ունենում, այլ սեփական ժողովրդական  
զանգվածների բարեկեցությունը բարձրացնելով. վոչ  
թե արյունահեղ պատերազմներով, վոր վարել ե կա-  
պիտալիզմը՝ քայլելով ժողովուրդների վոսկորների  
վրայով գեղի իր հաղթանակը, այլ ԽՍՀՄ մեջ բը-  
նակվող 150 ժողովուրդների յեղայրական գործակ-  
ցությամբ սոցիալիստական շնարարության գոր-  
ծում. վոչ թե մյուս ժողովուրդներին կողոպտելով՝  
նրանց վրա հրեշային ուղղամուրքեր դնելով, այլ  
նյութական հսկայական ոգնություն ցույց տալով  
նախկին ցարական ծայրամասերին, վորոնք սոցիա-  
լիստական սկզբունքներով վերածնում են իրենց ժո-  
ղովրդական տնտեսությունը. վոչ թե դաղութների  
սարկացմամբ, առանց վորի չեղարող արդի կապի-  
տալիզմը գոյություն ունենալ, այլ իրենց տնտեսա-  
կան զարգացմամբ հետամնաց ժողովուրդների սո-  
ցիալիստական ինդուստրացումով, ժողովուրդներ,  
վոր գտնում են առաջավոր ազգային հանրապետու-  
թյունների ժողովուրդներ. վոչ թե սարկացուցիչ  
փոխառություններով, վորոնք յերկիրը ամերիկ ու  
կողովութիւն մատնում ուստարերկրյա կապիտալի  
ձեռքը, այլ սեփական ժողովրդի, —իր պատմական  
ճակատագրի միակ կերտիչի ու տիրոջ, —ուժերով ու  
միոցներով:

Իսկ ի՞նչ և կապիտալիստական յերկիրների ժո-

զովուրդների ճակատագիրը։ Նրանց ի՞նչ են տվել նվաճված արտաքին շռւկաները, աշխարհակալական պատերազմները, վաշխառուկան պայմաններով ստացված փոխառությունները։ Նրանք արդյոք ժողովուրդներին են հարստացրել, թե կապիտալի մի բուռն մազնատներին։ Նրանք արդյոք վոչչացը եւ են աղջատության ցնցուիները, արդյոք նրանք աշխատանք տվել են միլիոնավոր գործազուրկներին, վորոնք ընդմիշտ դուրս են մզված արտադրությունից, արդյոք բարելավել են մասսաների նյութական դրությունը։

Ամերիկան\* աշխարհում ամենահարուստ յերկիրն է։ Ինքնարավ տնտեսության համար նա ունի բոլոր պայմանները, յերկրի բնական հարստություններ, հսկայական տերիտորիաներ, իր սեփական բարձր գարգացած հողագործությունը, վորը կարող է կերակրել Ամերիկայի նման յերկու յերկիր, ունի արտադրական հզոր առարկատ, վորն ամբողջական բեռնվածության պարագայում ժողովրդական յեկամուտը կարող էր հասցնել տարեկան մինչև 300 միլիարդ դոլարի։ Տակավին մի քանի տարի առաջ ամերիկյան ժողովարքը հավատում էր չուվերին, թե Ամերիկան «մշտնջենական պրոսպերիտիի» (ծաղկման, բարորության) յերկիր է, թե Ամերիկայի կապիտալիստական հասարակակարգը առավելություններ ունի ԽՍՀՄ սոցիալիստական հասարակակարգի վերաբեր մամբ, թե Ամերիկան աշխարհումս ամենաբարձր աշխատավարձի, ամենաբարձր կենսամակարդակի յերկիրն է։ Բայց ի՞նչ աեսք ունի այժմ Ամերիկան։

Տասը միլիոն գործազուրկ, աշխատավարձի իջե-

ցում, կործանված հարյուր հազարակոր ֆերմերական տնտեսություններ, «միջին դասի» սնանկացում, քողաքների լյումպեն—պլուտոարական բնակչության աճում, այսպես կոչված «գանգստերների» (բանդիտների) զինված ավազակության զարգացում, «ՆիՌԱ»-յի (վերականգնման ազգային աղմբինիստրացիա) քաղաքականության սնանկություն, —այս ե արդի Ամերիկայի պատկերը։ Ամերիկային չողնեց այն, վորնա ռազմական մատակարարումներով ամենքից ավելի հարստացավ համաշխարհային իմպերիալիստական պատերազմի ժամանակ, վորնա Վերսալում իր կամքն եր թելավրում հաղթող պետություններին և պարտված—պետություններին։ Նրան չողնեց նաև նրա իմպերիալիստական թափանցումը լատինական Ամերիկայի յերկիրները, չողնեց նույնպես բաց դռների քաղաքականությունը Զինաստանում։

Ամերիկյան ժողովուրդը տաղնապահար այսոր հարց ե տալիս իրեն։ Նա ի՞նչպես վարվի գործազուրկների հսկա բանակի հետ, աճած—մեծացած արտադրական ապարատի հետ, վորի զարգացմանը կապիտալիզմը սահմաններ ե դնում։ Եսփական փորձով նա իմանում է Մարքսի այն որենքը, վոր չահույթի նորման մի կապանքային կալանդ ե (ԿՈԼՈԾԿԱ), վորը խոչընդուն ե հանդիսանում կապիտալիստական Ամերիկայի արտադրողական ուժերի զարգացման համար։ ԽՍՀՄ փորձով նա տեսնում է, վոր սոցիալիստական մարդու նյութական ու հոգևոր կուլտուրայի վիթխարի թոփչքի հետ շաղկապված հասարակական պահանջների աճումն ապահովում ե բոլոր անսահման հնարավորությունները՝ արտադրության զարգացման համար։

Ամերիկայի վորձով նա իմանում է, վոր կտպիտալիք-մը՝ դա արտադրության անարխիա յէ, վորը կապի-տալիտական հարաբերությունների շրջանակներում «ՆԻՐԱ»-յի վոչ մի պլանավորմանը չի յենթարկվում:

Իսկ ԽՍՀՄ նրան ցուցյ ե ատլիս գերաբտագրու-թյան ճգնաժամերից ապահովված սոցիալիստական պլանային անտեսության կենդանի տիպը, մի տըն-տեսության, վորի մէջ աեր-պրոլետարիատը վերակա-ռուցում ե արդյունաբերության ճյուղերը, մեքենա-վորում ե մարդկային աշխատանքը՝ ձգտելով աշխա-տանքային ժամանակի հետազա իջեցման, գյուղա-տլնտեսության մեխանիզացիայով հուժկու զարկ ե ատլիս արտադրողական ուժերի հետազա զարգաց-մանը, մասսաների նյութական ու կուլտուրական մակարդակի անընդհատ բարձրացմամբ անսահման չափերով ընդլայնում ե ներքին սպառման տարողու-թյունը: (Ծափահարություններ):

Ահա աշխարհի մյուս հարուստ յերկիրը—Փրան-սիան: Զե՞ վոր Փրանսիական ժողովուրդը «հաղթող» յեղավ պատմության մէջ աեղի ունեցած պատերազմ-ներից ամենամեծում: Իսկ մեր յերկրի ժողովուրդ-ների պարտվեցին այդ պատերազմում: Ֆրանսիան իր հաղթության հետևանքով Յեվրոպայի քարտեզը վե-րածեց այնպես, ինչպես նա այդ կամքագով: Մեր յերկիրը փորձեցին ձեւել այնպես, ինչպես Ֆրանսիան ու իր զաշնակիցներն ելին ուզում: Ֆրանսիան Գեր-մանիայի զին փաթաթեց Վերսալը, Գերմանիան մեր յերկրի զին փաթաթեց վոչ պակաս ավազակա-յին հաշտություն-Բրեստ: Ֆրանսիան պատերազմից հետո Յեվրոպայում մի հեղեմոն եր, վորը դաշնա-

կիցների հետ միասին իր կամքն եր թելագրում Յել-րոպայի ժողովուրդներին, մեր յերկիրը կապիտալիս-տական ամբողջ աշխարհից մեկուսացված պետու-թյուն եր, —մի յերկիր, վորը ըշջապատված եր թշնա-մանքի փշալարով:

Բայց իրենց հազմող համարող պետությունների ժողովուրդները ատաղապահար հարց են ատլիս իրենց. Իսկ նրանց ի՞նչ տվեց իմպերիալիստական պատերազ-մում տարած հաղթությունը: Արդյոք այդ յերկիր-ների ժողովրդական մասսաներին բախտավորեցրեց այն ուազմատուդանքը (կոնտրիբուցիան), վորն ան-տանտյան իմպերիալիզմը գրեց գերմանական ժողո-վորութիւնի քանի սերունդների վրա: Այդ յերկիրների ազգային բանկերի նկուղներում դիզված վոսկու ուա-շարները արդյոք պահպանում են պետական բյուջե-յի դեֆիցիտից: Անտանտի զենքի հաղթությունը տը-վեց Վերսալը, Վերսալը գերմանական ժողովրդին ովեց Փաշիզմ, գերմանական ֆաշիզմը Փրանսիական ժողովրդին կատաղի նախապատրաստում ե ատլիս մի պատերազմի, վորը նորից, ինչպես և 1914 թվա-կանի նախորյակին, հավասարապես սպառնում ե թե՛ Փրանսիական և թե՛ գերմանական ժողովուրդներին: Իսկ յերբեմնի հետամնաց նուսաստանը— իմպերիա-լիստական տենչանքների առարկան, իմպերիալիստա-կան պատերազմում ծեծված, քաղաքացիական պա-տերազմից խոշտանդված յերկիրը, Բրեստի յերկիրը— սոցիալիզմի ուղիներում դարձավ Աորհրդային Սո-ցիալիստական Հանրապետությունների յերկիր, հաղ-թած սոցիալիզմի մի հղոր յերկիր: (Ծափահարու-թյուններ):

Յեկ այս հաղթությունը նա տարավ, լորովհետեւ  
նա ընթանում եր վոչ միայն այլ ուղիներով, քան  
ֆրանսիան, այլև այլ ուղիներով, քան Գերմանիան:  
Բրեստի վերացմանը նա ընթանում եր պրոլետարա-  
կան հեղափոխության ու սոցիալիզմի ճանապարհով,  
դերմանական ժողովուրդը Վերսալը խորտակում եր  
բուրժուական հակահեղափոխության ու Փաշիզմի  
ուղիներով: Յերեք տարի յե ինչ Փաշիզմը տանջում ե  
գերմանական ժողովրդին, բայց նա ի՞նչ բերեց նրան  
կորցրած բուրժուական դեմոկրատիայի փոխարեն:  
Ռեպարացիոն հատուցումների վոչնչացո՞ւմ: Բայց  
ռեպարացիոն հատուցումների վճարումը դադարեցրել  
եր Վեյմարյան հանրապետության կառավարությունը:  
Դաժան ճգնաժամի պայմաններում վոչ մի կառավա-  
րություն Գերմանիայում չեր կորաղանա կատարել  
ռեպարացիոն հատուցումները: Սաարի հանրաքվեյի  
հաղթությո՞ւնը: Բայց Վեյմարյան հանրապետու-  
թյան կառավարությունն ավելի մեծ քանակությամբ  
ճայներ կոտանար Սաարը Գերմանիային միացնելու  
համար, քան Փաշիզմը: Համընդհանուր պինապարտու-  
թյան վերականգնո՞ւմ: Բայց գերմանացի ժողովուր-  
դըն իր արյունով ե հատուցելու այդ «անարյուն»  
հաղթության համար: Տենդային շովինիզմն ու ռազմա-  
տենչ այն եքստագը, վոր Փաշիզմն ե արմատավո-  
րում՝ ժողովուրդներին դեպի բախտավորություն չեն  
տանում: Նրանց համար գերմանական ժողովուրդը  
հատուցեց 1918 թվականի աղետով ու Վերսալով:

Բուրժուական հաստատուն կարդ ու կանո՞ն:  
Բայց հունիսի 30-ը խոսում ե Փաշիստական ռեժիմի  
սրբունալի քառսի մասին: Շունչը փչող վոչ մի հա-

սարակակարդ տեսորով իրեն չի փրկել կործանումից:  
Տոկոսային ստրկության վոչնչացո՞ւմ: Բայց Գերմա-  
նիայում ներկայումս ո՞վ ե հավատում Փաշիստական  
ծրագրի այս դեմագոգիական կետին: Դասակարգա-  
յին պայքարի վերացո՞ւմ: Բայց ի՞նչ են վկայում գեր-  
մանական ժողովրդի վերաբերմամբ գործադրվող  
դադարական հաշվետեսները, Գերմանիայի բանվոր  
դասակարգի առաջամարտիկների հառաջանքն ար-  
ձակող համակենտրոնացման ճամբարները, ամենորյա-  
գաժան մահապատիճները՝ վորպես բուրժուազիայի  
սարսափի և Փաշիստական ռեժիմի թուլության նշան:  
Արդյունքերական արտադրանքի վերե՞լք: Բայց նա  
1928 թվականի համեմատությամբ ընկել ե մինչև  
87%, մինչդեռ ԽՍՀՄ մեջ նա յեռապատկել ե: Ժո-  
ղովրդական յեկամտի աճո՞ւմ: Բայց նա իջել ե մին-  
չել 60%, մինչդեռ ԽՍՀՄ մեջ նա յերկու անգամից  
ավելի յե աճել: Փաշիստական մեթոդներով Վերսալը  
վերացնելու արդյունքը սա յե: Այս և «Յերրորդ կայ-  
սրության» «հաղթությունների» անպահույց ճշմար-  
տությունը:

Ֆաշիստական դիկտատուրայի 13 տարուց հետո  
հենց այսպիսի արդյունքներով ե դալիս նաև իտալա-  
կան ժողովուրդը: Աշխատավարձի անշեղ անկում,  
գործադրկության աճում, դյուլացիների սնանկա-  
ցում, իտալական ամբողջ ժողովրդի աղքատացում,  
նրա կենսամակարդակի իջեցում 13 տարում 40%-ով,  
Յելլուպայի կիսաքաղց ժողովուրդների շարքում նա-  
խալիքին տեղը մինչև Փորթուգալիան, տենդային  
վաղք սպառագինումների հետևից, հարեշական ավան-

այուրայով պսակված աղբեսիվ հարձակում գաղութ-ների վրա:

Ավելի լավ չեն արդյունքները նույնպես ձապո-նիայում: Վերջին կես գարում ձապոնիան կապիտա-լիստական ուղիներով արագորեն ինդուստրացել է: Նա ժամանակակից արդյունեբարական ապարատ է կառուցել՝ պահպանելով ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունները: Բայց այսորինակ ինդուստրա-ցումը ի՞նչ է տվել ճապոնական ժողովրդին: Ճապո-նական ինդուստրացումը տառացի բարձրացել է ճա-պոնական բանվորի ու ճապոնական դյուլացու վոս-կորների վրա:

Վոչ մի տեղ աշխարհում այնպիսի հրեշտակին շա-հարդութում չկա, ինչպես Ճապոնիայում, ճապոնական բանվորի աշխատավարձը յերկու անդամ պակաս է նրանից, ինչ ստանում է Յելլուպայում ամենից ցածր աշխատավարձ ունեցող բանվորը. ճապոնական բան-վորուհուն ու դյուլացի աղջկանը չուկայում վաճա-ռում են վորակես ստրկուհու կապիտալիստին՝ մշտըն-ջենական ստրկացման համար, հասարակաց տներին՝ ինչպես կենդանի ապրանք: Ճապոնական դյուլացին, վորը իր մեջքով պահում է արդյունաբերության այդ ամբողջ մողերնացված ապարատը՝ իր ամբողջ ըն-տանիքով, իր բոլոր սերունդներով ինձնված և պարտ-քերով ու հարկերով, ինչպես ճանձը սարդությունով: Ճապոնական ժողովուրդը տարեց-տարի քանի դնում ավելի յե ավերգում: Ֆեոդալական-կապիտալիստական շահագործումը խանգարում է ներքին չուկայի զարդաց-մանը: Դրա համար ճապոնական կապիտալիզմը կա-տաղությամբ արտաքին չուկաներ է վորոնում՝ դի-

մելով հոչակավոր դեմպինգին ու տերիտորիալ հա-փըշտակումներին:

Ճապոնական իմպերիալիստներն այս հափշտա-կումները նրանով են պատճառաբանում, թե Ճապո-նիայի համար նեղվածք է կղզիներում և ուստի նրան նոր տերիտորիաներ են պետք Սովորում: Բայց ճա-պոնական բանվորն ու դյուլացին իրենց ավելի աղատ ու արձակ չգրացին այն բանից, վոր ճապոնական բա-նակը բոնատիրեց Մանջուրիան: Այս բոնատիրումից միայն ավելի նեղվածք ունեցավ բուն Մանջուրիայի տեղական բնակչությունը: Ճապոնական իմպերիա-լիստները հայտարարում են, թե նրանց սրբազն միսիան Ասիայի գեղին ցեղի իրավուքների պաշտպա-նությունն է ընդգեմ սպիտակ ցեղի: Արդյոք սրա համար չե՞ վոր նրանք կեղեցքում են Կորեայի, Ֆոր-մողայի գեղին ցեղը, թալանչիական պատերազմ են մզում նույն այդ ցեղի ժողովրդի-չինական մեծ ժո-ղովրդի դեմ: Ճապոնական իմպերիալիստները պըն-դում են, թե ճապոնական ժողովրդի բարզավաճան ու մեծության համար պետք են հաղթական պատե-րազմներ այլ ժողովուրդների դեմ ու Ճապոնիայի ընդարձակումն ի հաշվի այդ ժողովուրդների: Ճապո-նիան կես դարի ընթացքում չի դիտեցել ճապոնական գենքի պարտություն, վորովհետեւ նա պատերազմներ է վարել միմիայն թույլ հակառակութների դեմ: Սակայն նա ձեռք չի բերել բարզավաճում ճապոնա-կան աշխատավոր մասսաների համար: Ճապոնական իմպերիալիստները հավատացնում են, թե տնտեսա-կան ճղնաժամից դուրս դալը և նրա առաջացրած ժողովրդական աղետների վերջանալը հնարագոր են

ովատերագմի ուղիներով։ Ճապոնիան կանգնել և այդ ճանապարհի վրա, սակայն ճապոնական ժողովրդի աղետները վոչ թե պակասել, այլ ավելացել են սկսած այն որից, յերբ ճապոնական իմպերիալիստները ավազակում են Չինաստանում։

Ռազմա-ինֆլացիոն կոնյունկտուրան կարող եր բարձրացնել Միցուիյի և Միցուբիշիյի նման տրեսուների դիմիունները, բայց ճապոնական աշխատավոր մասսաների թշվառությունն ու սնանկացումը գրանից վոչ թե պակասեց, այլ ավելացավ։ Ի՞նչ շահեց ճապոնիայի ժողովուրդը ոտար տերիտորիաների հափշտակումներից և այլ ժողովուրդներին հպատակեցնելուց, բացի չափից դուրս ուռնացած վոստիկանական ապարատից, վորը վոչ միայն կորեյացիներին ու չինացիներին և ճնշում, այլև ճապոնիայի բանվորներին ու գյուղացիներին։ Ի՞նչ շահեց ճապոնական ժողովուրդը նրանից, վոր ցարական նավատօրմը ջրասույց յեղավ Յուսիմայի մոտ, իսկ ուսական բանակը ջախջախվեց Պորտ-Արտուրի մոտ։ Ճապոնական զինվորականության դիրքերի ուժեղացում, միլիտարիզմի նոր բեռ, վորը ճապոնիայի աշխատավոր մասսաների զրությունն ել ավելի յե վատթարացնում, ներքին չուկայի ել ավելի կրծատում, վորը ճապոնիային մղում ե դեպի նորանոր ուազմական ավանդուրաներ։

Իսկ ցարական հին թուսաստանի ծեծված ժողովուրդները ցարիզմի իմպերիալիստական քաղաքականության պարտության հետևանքով 1905 թվականի հեղափոխությամբ տկարացրին ցարական արտուրամբ ուեժիմը, հին թուսաստանի իշխող դասակար-

դերին մի հարված հասցրին, վորից նրանք յերբեք չկարողացան վոտքի կանգնել, և սրանով իսկ նախապատրաստեցին 1917 թվականի Հռկտեմբերյան մեծ հաղթությունն ընդունելով ուռնաստանյան կապիտալիզմի։ Յեկ սրա հետևանքով—այսոր Խաղաղ ովկիանոսի ամիերի մոտ ճապոնիային սահմանակից և վոչ թե ցարական հին թուսաստանը՝ նրա նեխված քաղաքական ուեժիմով, Յուսիմայի ու Պորտ-Արտուրի թուսաստանը, այլ ԽՍՀՄ—Խորհրդային, սոցիալիստական, հզոր մի յերկիր, վորին դիմչելով ճապոնական իմպերիալիզմը, յեթե ոփոկ անի նրա վրա հարձակվելու, կիչըրի իր ճակատը և կդանի իր Յուսիման, բայց Յուսիմա իր յերկրի Փեռուալակապիտալիստական հանրակարգի համար։ (Ծափակարություններ)։

Աշխարհի մի յերրորդ մասին տիրում են Անգլիայի իշխող զասակարգերը։ Չորս ովկիանոս են վողողում նրա յերկիրները—Աւտանայան, Խաղաղ, Սառուցյալ ու Հնդկական ովկիանոսները։ Նրանից ուղղակի կախման մեջ ե կես միլիարդ մարդկություն։ Նրան յենթակա տերիտորիաների ու ժողովուրդների անդրազկիանյան սահմանները հզոր նավատօրմն ե պահպանում։ Անգլիան իշխում ե ծովերի վրա, իր ձեռքումն ե պահպամ նեղուցների ու ծովուղիների բանալինները։ Անգլիական կապիտալիզմը՝ աշխարհում ամենահիննե, նա իր հետևում դրեթե չորսհարյուր տարվա պատմություն ունի։ Անգլիական բուրժուազիան վոչ 18 վոչ ել 7 տարի յե ունեցել, ինչպես խորհուրդների յերկիրն ե ունեցել՝ իր կառավարած ժողովուրդը բարեկեցության, ուներության և գոնե սոսկական կըշտության հասցելու համար։ Տասնյակ տարիներով

նա շահագործել ե գաղութիները՝ դուրս քաշելով նրանցից հսկայական գերշահույթ։ Պատերազմում նա ջարդ ու փշուր արեց Գերմանիային, վորը փորձում եր նրա հետ բաժանել համաշխարհային տիրապետությունը։ Նա տիրապետել ե արտաքին չուկաներում։ Նա հաղթական պատերազմներ ե մղել՝ ժողովուրդների վրա դնելով ուղղմառուղանքներ։ Մի խօսքով, նա լայնորեն ոգտագործել ե բոլոր այն միջոցները, վոր բուրժուազիան գովերգում ե վորպես ժողովուրդներին թշվառությունից ու աղետներից փրկելու ուղի։

Բայց արդյո՞ք անզիւսական արդյունաբերությունը ավելի լավ սկսեց վաստակել պատերազմից հետո այն պատճառով, վոր Անդլիան Գերմանիայից չուկաները խլեց։ Արդյո՞ք, փրկեցին Անդլիային ճգնաժամից Տրանսվալի վոսկեհանքերը։ Արդյո՞ք անդլիական յերեք միլիոն գործազուրկները աշխատանք ստացան այն պատճառով, վոր բրիտանական դրոշը ծածանվում է յերկիրագնուի հինգ մայր ցամաքներում։ Արդյո՞ք Մեծ Բրիտանիային յենթարկված կես միլիարդ մարդիկ մկնեցին ավելի լավ ապրել այն պատճառով, վոր Անդլիան շահեց համաշխարհային իմպերիալիստական պատերազմը։

Կապիտալիսմի որենքներն անողոք որենքներ են, նրանք դարձյալ անդլիական ժողովրդին քշում են գետի մասսաների դրության նոր վատթարացման, դուրսիների ել ամելի ստրկացման կախարդական շրջանը, քշում են գետի իմպերիալիստական նոր պատերազմների, քան բոլոր անցյալ պատերազմները միասին վերցրած։ Յել մոտ ե այն ժամը, յերբ անդլիական

ժողովրդական մասսաները կորհրդացին Միության մեջ կտեսնեն իրենց վաղվա որը՝ նրանց այլևս չետանջելու դաղութիների անջատման և Անդլիայի քաշքայման ու կործանման մղձավանջը, վորովհետեւ աշխարհում կա մի յերկիր, վորը ամերման մոխիրների տակից բարձրացել ե առանց մյուս ժողովուրդներին թալանելու, —ժողովուրդների յեղքայրական միության յերկիրը, վորոնք միահամուռով ջանքերով զարգացնում են իրենց արտադրողական ուժերը սոցիալիստական հիմունքներով։ Յել այս յերկիր զարմանահրաշախատով նրանք կիմանան ուրիշ, վոչ կապիտալիստական որենքներ, վոր սոցիալիզմը ժողովուրդներին բարեկեցություն ու յերջանկություն տալու համար վոչ պատերազմների կարիք ունի, վոչ սաղուուզանքների, վոչ արտաքին չուկաների, վոչ եւ դաղութիների։

Այժմ իմպերիալիզմի կողմից ստրկացված միլիարդ ու կես մարդկությունը կհասկանա, վոր անտեսական վերածնման համար նրան հարկավոր չեն վոչ անդլիական կապիտալը, վոչ ամերիկյան միասները, վոչ ճապոնական սիբիրը, վոչ Փաշիզմի գերմանական «քաղաքակրթիչը», վոր այդ վերածնունդը նրան ապահովողը կապիտալիստական սեփականության և շահույթի կապանքներից ազատված աշխատանքն ե, իր իսկ ժողովրդի աշխատանքը, վոր միմիայն սոցիալիստական ուղիներով կարելի յե հասնել ժողովուրդների վոչ թե Փիկախիկ, այլ իսկական սնկախության ու աղատության։ Ահա, թե, ընկերնե՛ր, ինչո՞ւ յեն ժողովուրդները շարժման մեջ մտնում, վորը վախեցնում ե համաշխարհային բուրժուազիային, ահա, թե

ինչո՞ւ նրանց մեջ անշեղորեն աճում է Խորհրդային Միության խանդավառ բարեկամների շրջանը, ահա թե ինչո՞ւ բուրժուազիան համաշխարհային նշանակություն ունեցող այս տեղաշարժերի սպառնալիքի տակ դիմում և ֆաշիզմին, իսկ բուրժուազիայի կառավարած ժողովուրդները պատասխանեցին ավելի շատ ու ավելի վճռականորեն անցնելով սոցիալիզմի կողմը:

Սոցիալիզմը ԽՍՀՄ մեջ հաղթելով՝ հեղափոխությունների ու պատերազմների յերկրորդ տուրի չեմքում քաղաքական նոր իրադրություն և ստեղծվում, միջազգային ասպարեզում կաղմազորվում և դասակարգային ուժերի մի նոր հարաբերակցություն, վորը կոմկուսներին պարտավորեցնում և այլ կերպ դնելու մեր պայքարի սորտեղիայի ու տակտիկայի մի շարք հիմնական հարցերը:

ԽՍՀՄ մեջ սոցիալիզմի ունեցած հաղթությունը կապիտալիստական յերկիրների կոմունիստական կուսակցությունների ձեռքը հզոր գործիք և տալիս՝ աշխատավոր լայն մասսաների վրա ներդրծելու համար:

«Այժմ մեր գլխավոր ներդրծությունը միջազգային հեղափոխության վրա մենք անում ենք մեր տնտեսական քաղաքականությամբ»<sup>1</sup>, — ասել և լենինը տակավին մի շրջանում, յերբ մենք ավարտում ենք պատերազմն ինտերվենտների դեմ և անցնում ենք պատեսական շինարարության: Այսոր մենք անում ենք այդ ներդրծությունը՝ բազում անգամ մեծացած սոցիալիզմի հաղթությամբ, վորն ավելի լայն և ավել-

լի խորը կերպով քանգում և կապիտալիզմի բազան: Այդ հաղթությունն այսոր պայմանական դեմոկրատիայի համաձայնողական քաղաքականության աղդեցությունը բանվորական մասսաներում մեծացնում է կոմունիզմի ձգողական ուժը նրանց մեջ, խարիսում և ֆաշիզմի մասսայական հիմունքները՝ բաց անելով կոմկուսների առաջ այն շերտերի վրա ներդրծելու լայնագույն հնարավորություններ, վորոնք մինչև այժմ տատանվում են կապիտալիզմի ու սոցիալիզմի միջև:

Ուստի ԽՍՀՄ շուրջը առիտացիա ու պրոպագանդաներու մեր հին մեթոդներն այժմ բավական չեն, — մենք պետք ենք կիմենք աշխատավոր բնակչության ավելի լայն շերտերին՝ ԽՍՀՄ կոնկրետ փորձով ցույց տալով նրանց, իրենց բախտը սոցիալիզմի ժամանակ: ԽՍՀՄ պաշտպանությունը դառնում է ԽՍՀՄ ակտիվ աշխակցությամբ ընդապատել սկսող թե՛ դասակարգերի, թե՛ կազմակերպությունների և թե՛ քաղաքական կուսակցությունների համաժողովրդական լայնագույն ճակատի յելակետը: ԽՍՀՄ բարեկամների ընկերությունները ներկայում շատ նեղ ինտելիգենտական հիմք ունեն: Այսինչ ԽՍՀՄ բարեկամները՝ դա միւսներ են, և վոչ թե հազարներ, վորոնք ներկայումս ընդգրկում են ԽՍՀՄ բարեկամների ընկերությունը: Հնանում են նույնպես գործելու հին մեթոդները, վորոնցից զուտ պրոպագանիզմի հոտ և փչում. հակախորհրդային զրաքարտության դեմ պաշտպանվելուց անհրաժեշտ և անցնել ԽՍՀՄ թշնամիների վրա հարձակվելուն՝ նրանց կանդնեցնելով լայն մասսաների դատաստանի առջև: Մասսայա-

<sup>1</sup> Լենին, ԽХVII հ. ռուս. էջ 410.

կան շարժման մի այնպիսի ձև, ինչպիսին և հանրատքեն Անգլիայում խաղաղության ու պատերազմի հարցի վերաբերմամբ՝ ԽՍՀՄ բազմաթիվ բարեկամները պետք է վոր ծավալելին Խորհրդային Միության խաղաղության քաղաքականության, զինաթափման նրա նախագծերի շուրջը և այլն:

Յերկրորդ, սոցիալիզմի հաղթությունը ԽՍՀՄ մեջ և սոցիալիստական շինարարության հետագա հաջողությունները կոմկուսներից պահանջում են ավելի ակտիվ քաղաքականություն վարել բանվոր դասակարգի գանձակիցների վերաբերմամբ՝ նրա հեղափոխական պայքարում, — գյուղացիության հիմնական մասսաների, քաղաքի սնանկացող մանր բուրժուազիայի, ինտելիգենցիայի վերաբերմամբ, և այլն: Կոմկուսները գյուղացիների մեջ ունեցած իրենց ադիտացիայի ժամանակ պետք է ողտագործեն ԽՍՀՄ մեջ կոլեկտիվացման ունեցած նվաճումները, կոլտնտեսականների նյութական ու կոլտուրական մակարդակի բարձրացումը, վորպեսզի ցրեն բուրժուական կուսակցությունների զրաքարտական կամպանիաները սոցիալիզմի դեմ և նրանց ազդեցությունից խլեն գյուղացիներին:

Կոմունիստներն իրենց ադիտացիայում քաղաքային մանր բուրժուազիայի վերաբերմամբ պետք է յելնեն վոչ միայն նեպից, վորը ժամանակավոր, անցողիկ բնույթ և կրում, այլև պարզաբանեն ԽՍՀՄ դրական փորձը, վորը սոցիալիստական շինարարության գործի մեջ և ներգրավում բոլոր այն տարրերը, վորոնք պատրաստ են աղնվորեն աշխատելու հոգուած ժողովրդի, և վորն ապահովում են նրանց և նրանց յերե-

խաների կայուն ներկան և ուրախ ապագան սոցիալիստական հասարակակարգի շրջանակներում: Կուլտուրան Փաշիստական բարբարոսությունից պաշտպանելու նշանի տակ անշրաժեցած և ծավալել շարժումը ինտելիգենցիայի մեջ՝ համախմբելով նրան ԽՍՀՄ, վորպես նոր սոցիալիստական կուլտուրայի վարոսի շուրջը՝ կապիտալիստական աշխարհի նողկանքի և ամայության մեջ: Կոմունիստները պետք է հիշեն, վոր ԽՍՀՄ մեջ սոցիալիզմի ունեցած հաղթությունը հետացնում է կոմունիստական արեւտացիայի գործն այս դասակարգերի ու խավերի մեջ, թույլ ետակա վոչ միայն չեղոքացնելու նրանց, այլև նշանակելիորեն ընդլայնում են նրանց շրջանը, վորոնց հնարավոր ետամովքին նվաճել դեպի պրոլետարիատի կողմը:

Յերրորդ, Խորհուրդների VII համագումարի պատմական վորոշումը՝ պրոլետարական գեմոկրատիայի հետագա լայնացման մասին հավասար, ուղղակի ընտրական իրավունքն ու գաղտնի քվեարկություն մտցնելու միջոցով՝ հարստացնում է Մարքսի-Ենգելսի-Լենինի-Ստալինի ուսմունքը պրոլետարական դիկտատուրայի մասին նրա զարգացման կոնկրետ փորձը՝ սոցիալիզմի հաղթության և սոցիալիստական անդամակարգ հասարակության կառուցման պայմաններում: Իսկ սա ուժեղացնելու յի մեր ազգեցությունը սոցիալ-դեմոկրատական այն մասսաների մեջ, վորոնք մինչև այժմ վախենում եյին պրոլետարական հեղափոխությունից, կանգնում եյին բուրժուական դեմոկրատիայի շուրջը՝ չնկատելով այն, թե ի՞նչ պես բուրժուական գեմոկրատիայի պաշտպանության

տակ Փաշիստական մութ՝ ուժեր եյին հասունանում . մյուս կողմից, պրոլետարական դեմոկրատիայի հետադա ծավալումը ԽՍՀՄ մեջ հեշտացնում և կոմունիստների մուտքն աշխատավորների այն շերտերի մոտ, վորոնք բռւրժուական դեմոկրատիայից հուսալըքլած՝ չեյին տեսնում դեմոկրատիայի բարձրագույն ձեի ուղին—խորհրդային դեմոկրատիան, զոհ եյին դառնում Փաշիստական դեմադոդիայի, վորը նրանց վկին եր փաթաթում բիրտ բռնության և բոլոր իրավունքների ու ազատությունների վոչնչացման ռեժիմը :

Զորբորդ, մեծանում են ԽՍՀՄ-ի, վորպես ժողովուրդների ազատության պատվարի դերն ու նշանակությունը : Ժողովուրդներին ցույց տալով նոր սոցիալիստական դեմոկրատիայի կենտանի, ակնբախ որինակը, մի որինակ, վորն անխօնիորեն կապված և պրոլետարական դիկտատուրայի զարդացման հետ, հակադրելով սոցիալիստական այս դեմոկրատիան բուրժուազիայի տեսորիստական դիկտատուրային, դեպի վորը վերաճում և կաշառված-փչացած բուրժուական դեմոկրատիան՝ կոմունիստները պետք ե ժողովրդական մասսաները մորիլիզացիա անեն բուրժուական դիկտատուրայի բոլոր ձևերի, առաջին հերթին Փաշիզմի դեմ : Միևնույն ժամանակ ԽՍՀՄ իր սոցիալիստական դեմոկրատիայի կոնկրետ փորձով ներգործում և հակաֆաշիստական ուժերը մորիլիզացիա անելու վրա, ինչպես կապիտալիստական յերկերների ներսում, այնպես և միջազգային ասպարեզում՝ խորացնելով հակասությունը Փաշիզմի կուսակցության և հակաֆաշիստական ուժերի

մինչև «դեմոկրատիկ» պետությունների ու Փաշիստական պետությունների միջև :

Թեեւ կապիտալիստական բանակում յեղած այս հակասությունը յերկրորդական նշանակություն ունի համեմատած աշխարհի հիմնական բաժանման—սոցիալիզմի աշխարհի և կապիտալիզմի աշխարհի—բաժանման հետ՝ պրոլետարիատը չի կարող չեղոք դիրք դրավել այն պայքարի վերաբերմամբ, վոր տեղի յեղագիր այս պայքարի վերաբերմամբ, վոր տեղի յեղագիր ամբողջ աշխարհի հակաֆաշիստելով ներսում : Հենունենում կապիտալիստական բանակի ներսում՝ վորպես ամբողջ աշխարհի հակաֆաշիստելով ԽՍՀՄ, վորպես ամբողջ աշխարհի հակաֆաշիստական ուժերի համախմբման կենտրոնի վրա, վորպես վճռողական ուժի վրա միջազգային հակաֆաշիստական այս ճակատում, ողուազործելով քաղաքական տարրեր ուժիմներ ունեցող պետությունների միջազգային հակասությունները՝ բանվոր զասակարգը դային հակասությունները՝ հակաֆաշիստական ուժերի հապետք ե գլխավորի հակաֆաշիստական ուժերի հապեկնարոնացման դործը յուրաքանչուր առանձին յերկրի ներսում և ամեն կերպ ընդլայնի հակաֆաշիստելու հակատը միջազգային ասպարեզում : Կոմուտական ճակատը միջազգային ասպարեզում՝ կոմունիստներն իրենց հակաֆաշիստական քաղաքականությունն ել ավելի պետք ե ակտիվացնեն՝ հաշվի առնեթյով, վոր զասակարգային պայքարի սրման և հեղալով, վոր զասակարգային պայքարի սրման և հեղալով, փոխության ու հակահեղափոխության ուժերի ավելի փոխության ու հակահեղափոխության ուժերի ավելի ավելի համախմբման պայմաններում հակաֆաշիստական շարժումը կարող ե հանդիսանալ մի կամուրջ, տական շարժումը կարող ե հանդիսանալ մի կամուրջ, վորով մասսաները կանցնեն սոցիալիզմի ու պրոլետարական հեղափոխության կողմը :

Հինգերորդ, ուժեղանում և ԽՍՀՄ վորպես ժողովուրդների միջև խաղաղության պատվարի դերը:

Խամար փոխակերպելու համար : Այդ կանեն իրենց սարկացնողների գեմ՝ ապստամբված ժողովուրդներն իրենք : ԽՍՀՄ-ին պատերազմները պետք չեն այն պատճառով, վոր համաշխարհային յերկու սիստեմի մրցակցության մեջ ամեն որ հաղթողը սոցիալիստական սիստեմի վերաբերմամբ իր ունեցած առաջնային առողջ և տալիս կապիտալիստական սիստեմի վերաբերմամբ իր ունեցած առավելությունները : Յեթե համաշխարհային բուրժուազիան մեր յերկիրը մի տասը տարի հանդիսավոր թողներ՝ ԽՍՀՄ իր սոցիալիստական նվաճումներով կհամոզեր յերկրագնդի մարդկային հակայան մասսաներին իր սիստեմի առավելությունների վերաբերմամբ, «ամենախաղաղ» մարդկանց, վորոնք ներկայումս կապիտալիզմի հենարանն են, կողարձներ նրա վերաբերմամբ հեղափոխականներ :

Բայց կապիտալիստական աշխարհը չի ուղղում թողնել, վոր սոցիալիստական հասարակակարգը հանդիսավորանա : Նա չի կարող առանց պատերազմների ապրել և ամենայն արագությամբ քարշ և տալիս աշխատավորներին դեպի նոր պատերազմներ : Յեզ նոր աղետի ահավոր վտանգի հանդեպ ժողովուրդներն իրենց հայացքը դեպի այն յերկիրն են դարձնում, վորի զինված հզոր ուժը տակավին զայտում և իմպերիալիստական պատերազմի հրձիկներին : Յեթե բուրժուազիան իր յերկիրներում իրոք աղատ հանրաքվե կատարեր այն մտսին, թե ի՞նչ են ուղում ժողովուրդները, — պատերազմ, թե սոցիալիզմ, — նա կը հասկանար, թե ինչն է ԽՍՀՄ վոչ թե որերով, այլ ժամերով անող այն աղբեցության դադանիքը, վոր նա ունի ամբողջ աշխարհի ժողովուրդների վրա :

ԽՍՀՄ իր շուրջը միախոնում և խմբավորում երուր նրանց, ովքեր պատերազմ չեն ուղում : Դրանք միայն քաղաքի ու գյուղի աշխատավորության բարձմամբիլիսն զանդքածները չեն, զրանք զանազան յերկիրների ներսում դանվող գասակարգերը, նրանց կուսակցություններն ու կազմակերպությունները չեն միայն : Դրանք ապկեր, ժողովուրդներ ու պետություններ են, վորոնց անփախությանը սպառնում ե պատերազմը : Դրանք անդամ իմպերիալիստական խոչը յերկիրների բուրժուական պետություններ են, չորսնք այսոր շահագրգուպած չեն. պատերազմուիլ : Ինչ ել վոր լինեն նրանց շարժառիթները, — զա այժմ յերկուրդական նշանակություն ունի :

Հենվելով ԽՍՀՄ վրա՝ պրոեւտարիատը պետք յերկիրների ներսում ստեղծի լայնագույն համաժողովրդական ճակատ պատերազմի դեմ պայքարելու համար և ժողովրդական լայնագույն մասսաները միավորի մի ճակատի մեջ պատերազմն սկսողների դեմ : Իսկ սա կոյունիստներից պահանջում ե, վոր նրանք, փոխանակ հակապատերազմական կարճառե, մեկուսացված կամպանիաներ մղելու հին, տնայնաղործական յեղանակների՝ կոորդինացված լայնագույն այնպիսի պայքար մղեն պատերազմի դեմ, վորի մեջ ԽՍՀՄ խաղաղասիրական քաղաքականության հիմունքներով ներդրամիկեն հակապատերազմական բոլոր ուժերը՝ ինչպես աղքային, այնպես և միջազգային մասշտարով, և վորը զուգակցի գործողության բազմազան ձերերի ցույցերը փողոցներում, յելույթները պառլամենտներում, բանվորական միավորումների միջազգային կոնֆերանսներ գումարելը, հակապատերազմական

կոմիտեների խիտ ցանց ստեղծելը և այլն։ Այժմ բավական չեւ հոգուտ խաղաղության փոքրիկ կամպանիաների բերդան արձակել, յերբ կոմունիստաներն իմպերիալիստական պատերազմի սպառնալիքի դեմ կարող են գործ դնել ժողովրդական լայնագույն շարժումների տանկերը։

Ամեն կերպ ժողովրդականացնելով խաղաղության ստալինյան քաղաքականության հաջողությունները, մի քաղաքականություն, վորը կենսագործվում է ԽՍՀՄ մեջ և վորը փայլուն կերպով ապացուցել է, թե ինչպես կարելի յեւ խանդարել և ձախողել պատերազմի հրձիղների ավազակային սլանները՝ կոմունիստները պետք եւ հաղթահարեն Փատոլիստական այն դիրքավորումները, թե անհնարին եւ պատերազմին արգելք հանդիսանալը, թե պատերազմի նախապատրաստման դեմ պայքարելը աննպատակ եւ, —դիրքավորումները, վոր բոլորը են հակապատերազմական շարժման առաջլաւ, չափազանց սահմանափակ չափերից։

Վեցերորդ, ել ավելի յեւ աճել ԽՍՀՄ նշանակությունը, վորպես համաշխարհային պրավետարական հեղափոխության մի ամրոցի, վորն ամեն կերպ ուժեղացնում է համաշխարհային բանվոր դասակարգի դիրքերը կապիտալիտ գեմ պայքարելիս։ աճել եւ ԽՍՀՄ պրոլետարիատի տեսնկարար կշիռը համաշխարհային հեղափոխական շարժման մեջ։ աճել եւ ԽՍՀՄ պրոլետարիատի առաջատար դերը, զամկ (բ) կ հեղինակությունն ամբողջ աշխարհի աշխատավորների մեջ։ ԽՍՀՄ սոցիալիստական հաղթությունները հզորագույն լծակներ են դասնում կապիտալիստական յերկրները։

բանվորական մասսաները կոմկուսների ազդեցության տակ դցելու դործում։

ԽՍՀՄ ներքին ու արտաքին քաղաքականությունը հեշտացնում է կոմկուսների մոտեցումն այն մասսաներին, վորոնք մինչև այժմ կոմունիստական աղղեցությունից դուրս են կանգնած յեղել։ Շնորհիուլ այս բանի՝ իր, կոմինտերնի քաղաքականությունն ել ստանում է ավելի համակենտրոնացված, հարվածային ուղղություն։ սա արգեն շարժման առանձին ջոկատների «պարտիզանություն» չեւ, ջոկատներ, վորոնք մերթավից դուրս առաջ են ընկնում և պարտության յենթարկում իրենց, մերթ հետ են մնում ընդհանուր տեմպից և դրանով իսկ պարտության են յենթարկում ուրիշներին, — սա բազմակողմանիորեն կըսադատված խսորեն հաշիվ արված, գործող ուժերի ամբողջությունը, հաջողության և անհաջողության բոլոր շահսերը հաշվի առած միջազգային ստրատեգիա ու տակտիկա յեւ։

ԽՍՀՄ տեսակարար աճած կշիռը համաշխարհային եկոնոմիկայում ու քաղաքականության մեջ ուժեղացնում է համաշխարհային իսկ բանվորական շարժման և նրա կոմունիստական ավանդարդի նշանակությունը, այս շարժման ավանդարդը դուրս եւ գալիս իր զարգացման պրոպագանդիստական ըրջանից, ինքը գառնում եւ բանվոր դասակարգի միջազգային մեծ քաղաքականության ներգործուն ուժը, իր առջև կարող եւ զննել ավելի խիզախ և խոշոր խնդիրներ, քան մինչև այժմ։ Հենվելով ԽՍՀՄ վրա՝ բանվոր դասակարգի այս պանդարդը կարող եւ ավելի ու ավելի վճռականորեն

ներգործել անցքերի ընթացքի վրա և ավելի հաճախ փոխել նրանց ուղղությունը:

Բայց սա իր հերթին ուժեղացնում է ԽՍՀՄ դիրքերը՝ խաղաղության, ազատության, սոցիալիզմի համար նրա մղած պայքարում: ԽՍՀՄ այլևս այն յերկիրը չէ, ինչ յոթը տարի առաջ է յեղել: ԽՍՀՄ իր առջև մեծ խնդիրներ ե դնում, մեծ ռեսուրսներ ունի այդ խնդիրների կատարման համար, իր գրած նպատակների մեջ կարող է ավելի մեծ հաջողությունների համար, քան մինչեւ այժմ: Մեր փոխհարաբերությունները կապիտալիստական ողակման հետ մեր առջև բացվող շրջանում արդեն կառուցվում են փոքր ինչ այլ հիմունքով, քան յոթը տարի առաջ: Թե մեր թշնամիների և թե մեր բարեկամների հետ մենք ներկայումս կարող ենք այլ լեզվով խոսել: (Ծափահարություններ): Յեզ համաշխարհային պրոլետարիատն զգում է խորհուրդների յերկրի աճած ուժը, բարձրանում և պրոլետարիատի վստահությունը գեղի իր ուժերը:

Յեզ պրոլետարիատի այս գիտակցությունն ամրապնդվելու յէ հաղթած և այսուհետեւ ել հաղթող սոցիալիզմի նյութական հզորության աճման համեմատ: Այս իսկ գիտակցությունը կրառնա մի վիթիարի նյութական ուժ, վորին կապիտալիստական վոչ մի ամրոց չի կարող գիրմանալ:

ԽՍՀՄ մեջ հաղթություն տարած սոցիալիզմի և ամբողջ աշխարհի իրենց ազատազրման համար պայքարող աշխատավոր մասսաների այս համերաշխության ու այս միւսնության մեջ դրված և կապիտալիզմի անխուսափելի խորտակման և մարդկությունը ճնշումից, շահակործումից, ռեակցիայից, Փաշիզմից և

թալանչիական պատերազմներից ապաստըկացնելու մեծ հեռանկարը: Յերկրագնդի վրա միլիոնավոր մարդիկ ավելի ու ավելի յեն տոգորվում այն համոզմունքով, թե նրանց ազատազրման գործը և հաղթական սոցիալիզմի յերկրի հաջողությունները չեմյանցից անբաժանելի յեն: Նրանք տեսնում են ու գիտեն, վոր մեր սոցիալիստական հաղթությունը, մեր սոցիալիստական դործարանները, մեր կողմանտեսային գաշտերը, մեր ամբողջ հզորությունը և մեր բոլոր նվաճումները—այս ամենը—վոչ միայն ԽՍՀՄ ժողովուրդների, այլև համայն աշխարհի աշխատավորների ռեփականությունն է: (Ծափահարություններ):

Մենք յերբեք չենք մոռանում այն, ինչ ասել ե մեղ ընկեր Ստալինը.

«ԽՍՀՄ բանվոր դասակարգը համաշխարհային բանվոր դասակարգի մի մասն է: Մենք հաղթել ենք վոչ միայն ԽՍՀՄ բանվոր դասակարգի ջանքերով, այլև չնորհել համաշխարհային բանվոր դասակարգի աջակցության: Առանց այս ողնության մեզ վազուց կտցահարած կլինեյին»:

Մեր հզորությունն ու մեր նվաճումները պատկանում են վոչ միայն ԽՍՀՄ ժողովուրդներին, վոչ միայն կոմունիստական ավանդաբարին, այլև ամբողջ աշխարհի բանվոր դասակարգին—թե՛ արհմիությունների Ամսակամմի միավորմանը հարող բանվորներին, թե՛ Յերկրորդ հնաերնացիոնալի կուսակցությունների հետեւ զնացող բանվորներին, թե՛ անկազմակերպ

<sup>1</sup> Առաջին, Տնտեսագարների խնդիրների մասին, «Լենինիզմի հարցեր», հջ 445—446, 10-րդ ռուսերատ, կուսիսա 1935թ:

բանվորներին և թե հարկադրանքով Փաշխտական կազմակերպությունները քշված բանվորներին։ Մեր սոցիալիստական նվաճումները նաև թե՛ Զապեյի աշխատավոր բնակչության սեփականությունն ե, թե՛ Լիբերիայի նեղերի, թե՛ չինացիների, թե՛ հնդկացիների, թե՛ մալայացիների սեփականությունը, համայնշաբարհի աշխատավորության սեփականությունն ե՝ առանց ազգերի ու ցեղերի, լեզվի ու մաշկի դույնի խտրության, — այն ամենքի սեփականությունը, ովքեր պայքարում են շահագործման ու կեղեքման դեմ։ (Ծափահարություններ)։

Յեկալիբոնավոր մարդիկ ավելի սերտորեն են համախմբվում ԽՍՀՄ — բոլոր յերկրների աշխատավորների հայրենիքի — շուրջը, վորովհետև նրանք սկսում են հասկանալ, վոր ինչպես խաղաղության պայմաններում, այնպես ել պատերազմի պայմաններում, ԽՍՀՄ ամբացման, նրա հզորության ուժեղացման, պայքարի բոլոր ճակատներում նրա հաղթության ապահովման շահը լիովին զուղադիալում և բոլոր աշխատավորների շահերին՝ շահագործողների դեմ նրանց մղած պայքարում, նպաստում և համաշխարհին պրոլետարական հեղափոխության հաղթակին։

Նա, ով ուզում է, վոր սոցիալիզմն ամբողջ աշխարհում հաղթի, ով կամենում է, վոր ժողովուրդների միջն յեղայրություն ու խաղաղություն լինի, ով կամենում է, վոր վերջանան շահագործումը, Փաշիզմն ու իմպերիալիստական ճնշումը, նու չի կարող չլինել ԽՍՀՄ կողմը։ ԽՍՀՄ պաշտպանությունը, նրա բոլոր թշնամիների դեմ նրա հաղթականություն տանելուն

աջակցելն են, վոր ոլետք և վորոշեն յուրաքանչյուր հեղափոխական կազմակերպության, յուրաքանչյուր կոմունիստի, յուրաքանչյուր սոցիալիստի, յուրաքանչյուր անկուսակցական բանվորի, դյուլացու, քաղաքի աշխատավորի ու ինտելիգենտի գործողությունները։ Բայց սա մեծ պարտականություններ ե զնում նաև մեր կուսակցության, մեր բանվոր դասակարգի, սոցիալիստական կերպիչների մեր ժողովրդի վրա ամբողջ աշխարհի բանվորների ու աշխատավորների վերաբերմամբ։

«Մենք պետք ե այնպես առաջ շրթվենք, — ասել ե ընկեր Ստալինը, — վոր համայն աշխարհի բանվոր դասակարգը, նայելով մեզ կարողանաւ ասել, ահա՛ նա, իմ առաջավոր ջոկատը, ահա՛ նա, իմ նա, իմ հարվածային բրիդադը, ահա՛ նա, իմ հայրենիքը, — նրանք լով են անում իրենց գործը, մեր գործը, — նրանց աջակցենք կապիտալիստների դեմ և բորբոքենք համաշխարհային հեղափոխության գործը»։ (Ծափահարություններ)։

«Մինչև վերջը հավատարիմ մինել սրուետարական ինտերնացիոնալիզմի գործին, պրոլետարների յեղայրական միության գործին», — մեր կուսակցությանը, մեր բանվորներին այս բանն ե ուսուցանում ընկեր Ստալինը։

Մենք հասկանում ենք, թե ինչ ե նշանակում մինչեւ վերջը հավատարիմ մինել պրոլետարական ին-

1 Ատալին, Տնտեսավարների խնդիրների մասին, «Հենինիզմ» հարցերը, եջ 446 10-րդ ուսուա, հրատ. Կուսաքան, 1935 թ.։

տերնացիոնալիզմի գործին, յերբ բուրժուազիան կապիտալիստական յերկիրների աշխատավորներին դլորում ե իմակերպալիստական պատերազմների ու Փաշլոմի անդունչը: Մեր կուսակցությունը լենինյան կենտկոմի ղեկավարությամբ, մեր մեծ Ստալինի փորձված, հաստատակամ և իմաստուն առաջնորդությամբ այս դործին հավատարիմ ե յեղել, յերբ կատարելով Լենինի ավանդը՝ անդադրում աշխատում եր նեպի Ռուսաստանը սոցիալիստական Ռուսաստան զարձնելու վրա: (Ծափահարություններ): Այսոր, ընկերներ, նա, այդ սոցիալիստական Ռուսաստանն ե, զոր կանգնած և ձեր առաջ, համայն աշխարհի բանվորների առաջ: (Ծափահարություններ):

Մեր կուսակցությունը Ստալինի ղեկավարությամբ անձնվիրությամբ ծառայել ե և ծառայում է պրոլետարական ինտերնացիոնալիզմի գործին, յերբ թշնամական կապիտալիստական ողակման պայմաններում իր յերկում սոցիալիզմ կառուցելու խնդիրը զրեց իր առջե: Այսոր առկա յե այդ հաղթությունը: Ստալինի ղեկավարությամբ այսոր մեր կուսակցությունն ավարտում է սոցիալիստական հասարակության կառուցումը, ԽՍՀՄ զարձրել ե համաշխարհային պրոլետարական հեղափոխության զորեղ բազան, նա վոչ միայն պահպանել, այլ և հսկայական չափով մեծացրել ե սոցիալիզմի ձկողական ուժը կապիտալիստական յերկիրների աշխատավորների մեջ: Մեր կուսակցությունը լենինյան կենտկոմի ղեկավարությամբ, ընկեր Ստալինի գլխավորությամբ մինչև վերջը ծառայել ե և ծառայում է պրոլետարական ինտերնացիոնալիզմի գործին, յերբ նա ամբապնդում եր և ամբապնդ-

պնդում ե խորհուրդների յերկրի պաշտպանունակությունը (Բուռն ծափահարություններ):

Յեկ յեթե բոլոր յերկիրների աշխատավորներն այսոր գասակարգային թշնամու զեմ զինաթափված չեն, յեթե այսոր աղասագրության համար մղած իրենց պայքարում նրանք հուսով են նայում պրոլետարական գիկտատուրայի պետությանը, հաղթական սոցիալիզմի յերկրին, ժողովուրդների խաղաղության ու աղատության հզոր պատվարին՝ ԽՍՀՄ-ին, ապա այդ մեծ նվաճումը հետեւանք ե ստալինյան քաղաքականության, այն ե, մինչև վերջը հավատարիմ մնալ պրոլետարական ինտերնացիոնալիզմի գործին: (Ծափահարություններ):

Թե՛ մեր կուսակցությունը, թե՛ մեր ժողովուրդը և թե՛ մեր յերկիրը, վորոնց լենինն ու Ստալինն են կրթել՝ պրոլետարական ինտերնացիոնալիզմի այս գործին մշտականորեն հավատարիմ են ու հավատարիմ ել լինելու յեն՝ ինչ փորձությունների առաջ ել կանգնեցնի մեզ պատմությունը: Մեզանից ամեն մեկը մինչև վերջին ձիգը, մինչև վերջին շունչը, մինչև արյան վերջին կաթիլը հավատարիմ ե լինելու պրոլետարական ինտերնացիոնալիզմի գործին: (Բուռն ծափահարություններ): Բացականչություններ՝ «ուռա»: Բոլոր վոտիքի յեն կանգնում): Ահա թե, ընկերներ, ինչո՞ւ յերկրագնդի բոլոր ծայրերում շահագործվագններն ու ննշվածները հաղթական սոցիալիզմի մեր յերկրում տեսնում են իրենց հայրենիքը, մեր կուսակցության ու մեր բանվոր դասակարգի մեջ՝ համաշխարհային պրոլետարիատի հարվածային բրիգադը, մեր Ստալինի մեջ՝ աշխատավոր ամբողջ մարդկության մեծ, ի-

մասուն, սիրելի առաջնորդին: (Բուռն ծափահարությունը պարզ ու ամբապնդվի պրոլետարական ինքուններ):

տերեացիոնալիզմի անխորսակելի գործը:

Կեցցե՛ ԽՍՀՄ, ամբողջ աշխարհի աշխատավորների հայրենիքը: (Ծափահարություններ):

Կեցցե՛ մեր Ստալինը: (Բուռն ծափահարություններ, վոր վերածվում են ովացիայի, Ամբողջ դահլիճը վոտքի յև կանդնում: Բացականչություններ՝ «ուռա», «բանտուեյ», «ոռու ֆրուտ», «կեցցե խորհրդային իշխանությունը»: «Կեցցե ընկեր Ստալինը»: Պատղամավորները զանազան լեզուներով «ինտերնացիոնալ» են յերգում):

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

I. Սոցիալիզմի հաղթությունը ԽՍՀՄ-ում . . . . .	5
II. Սոցիալիստական յերկը զարգացման նոր շրջանը . . . . .	27
III. Համաշխարհային պրոլետարական հեղափոխության զարգացման նոր ետապը . . . . .	55



«Ազգային գրադարան



NL0207518

32. 230

ԳԻՒԸ 70 Կ.

ЦЕНА 70 Կ

35-1  
Ca967

1  
2



Д. З. МАНИЛЬСКИЙ  
ИТОГИ СОЦИАЛИСТИЧЕСКОГО  
СТРОИТЕЛЬСТВА В СССР

Армпартиздат, Эривань, 1935